



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



813

9(45)  
F-15


9(45)  
F-15

1860



Կ Ա Ր Ե Ի Ո Ր

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ



ՄԵԼԻՔԵՍԱՀ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆՅ



2004

ՓԱՐԻԶ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
1860

9 (45)  
F-15



ԿԱՐԵԻՈՐ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ



ՄԱՐԿԱ

ՓԱՐԻՉ . — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ






9 (45)  
F-15  
Vh'

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

# ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

246



ՄԷԼԻՔՆԱՀ  
ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆՑ



2012

ՓԱՐԻԶ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
1860

12597

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



3392  
39 Գ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
(1981)

# Խ Ո Ր Հ Ր Դ Ա Ծ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Երկար դարերէ հետէ՛ երեսէ ձգուած մայր մը տղայ բերելու ցաւ կը քաշէր ու ահա՛ ծնաւ հրէշ մը, որուն վրայ աշխարհ ամենայն մտքի մեծ ամիշութեամբ մը կը նայի: Այս մայրը՝ գերի ինկած Իդալիա և որդին՝ անիկա ազատելու համար չըտեսնուած անձնուրացութեամբ կեանքն դնող հայրենասէր նահատակն էր, որուն անձին մէջ նկարագրուած էր հայրենեաց ազատութեան պատկերն և որն որ էր Կարիպալտի: Այս հայրենասիրին և թէ ուրիշ իդալացի հայրենասիրաց չափէ դուրս ցուցուցած քաջութիւններն և եռանդն աշխարհիս լեզուին և գրչին նիւթ ըլլալէն զատ՝ Հռովմայ հոգևորէ և մարմնաւորէ խառն իշխանութեան և Նաթիօլիի թագաւորութեան նկատմամբ ունեցած խորին ատելութիւնքն և յանդուգն միանգամայն իրաւացի վարմունքն ալ անոր մտքին մեծ ամիշութիւն բերած են. ինչպէս որ մինչև ցայսօր իրենց ըրած և հրատարակած յայտարարութեանց մէջ ալ կը տեսնուի այս բանս և որոնցմէ աւելի ուշադրութեան արժանին է այն, զոր Մարշի և Օմպրիոյ մասնաժողովքն ուղղած է նոյն Հռովմայ հպատակեալ երկիրներուն բնակչացը, և որ իրաւցընէ մեծ զարմանք պատճառած է անոր ընթերցողացը և լսողաց ըսել տալու թէ՛ ինչպէս կըլլայ որ Հռովմայ Աթոռին ոտքին քով սնուած, կըրթուած լուսաւորեալ ժողովուրդ մ'այսպիսի մեծ համարձակութեամբ իւր հոգևոր տէրն և առաջնորդն արիւնահեղ բռնաւոր կը կոչէ, որ ընդհանուր Քրիստոնէութեան միմիայն անսխալ գլուխը և բացարձակ տէրն ըլլալը հարիւրաւոր աւարիներէ հետէ յիրաւանց վճռած է: Թո՛ղ այս խնդրոյն պատասխանը դարձեալ այն նոյն յայտարարութիւնն ըլլայ և զայն հրատարակող Մասնաժողովն տայ որ, ո՛ր երկրին և ազգին որ ուղղած է, անոր սիրտն՝ իւր սրտին մէջ, անոր հոգին՝ իւր հոգւոյն մէջ ունի, և անոր նպատակներն իւր նպատակն է:

Ահաւասիկ նոյն յայտարարութիւնը:

Բնակիչք Մարշի եւ Օմպրիոյ:

Ահաւասիկ տարի մ'է որ ամենքս միաբերան Պապին դեմ բարձրաձայն կը բողոքենք. այս բողոքումն ո՛չ երբեք իւր իրաւունքներն գինուց յարաբերութեանցը կամ միջոցին առանդած ժողովրդեան մը մոռցիւնն է, որուն ազատութեան փրկութիւնը արեան մեջ խղղուած է:

Այս անցած ժամանակներն ո՛չ միայն ձեզի՛ հայրենեաց երկրին վրայ բնակողնե-

րուդ համար՝ տխրական եղած են, այլ եւ մեզի՝ որ չէ քե իդալիոյ հողոյն վրայ ապրած ենք, հնապա, տարագիր գերութեանը : Այս ժամանակներն մեզի համար ցաւալից յիշատակ մը պիտի ըլլան : Այլեանց լեռներէն մինչեւ Էտնա, Իդալիոյ դրօշակը զմեզ ամեն կողմանէ շուրջ կրպատէ, եւ ազատն Իդալիա՝ եղբայրական ձեռք մը կերկնցընէ ձեզի :

Ելէք ուրեմն, ելէք. ի բազմաց հետէ ձեր կուրծքին մէջ խղղուած աղաղակը բողայսօր քնքալով հնչէ ձեր լերանցը վրայ, ձեր հովտացը մէջ, եւ ծանուցանէ պատմէ ձեր հարստահարեալ եղբարցը՝ ուրիշ բռնաւորի մը շիջումն ու անկումը, եւ քե ուրիշ ժողովրդեան մը յարութիւնն ու կանգնումը մօտ է կատարուելու : Եւրոպա անագան իմն, իւր վճիռն տուած է Պապերուն ժամանակաւոր իշխանութեանը վրայ եւ Աստուածային կշիռն՝ երկար ժամանակէ հետէ ոտից կոխան եղած ժողովրդեան իրաւանց կողմն կը հակի : Դադրինք ուրեմն Հռովմայ դահլճին Սպարտական ստրուկներն ըլլային, ոտքի ելէք :

Դարաւոր գերութեան մը շղթայներն բոթուել ուզող ժողովրդեան մը ատելութիւնն ու կատաղութիւնը ահաւոր եւ անդիմադրելի են, եւ ձեր ազատութեան հրեշտակով օրհնուած գէնքերն՝ ձեր սուրբ եւ ազգային վրեժխնդրութեան պաշտօնեաներն պիտի ըլլան : Ի ձակատամարտին պիտի միանանք. Ուր Աստուած եւ աշխարհս մեր հետ պիտի ըլլան :

Կեցցէ Իդալիա, կեցցէ Վիզբօր-Էմմանուել :

Օմպրօ-Մարշիէն մասնաժողովոյն անդամքն, եւ այլն :

Իսկ նուաաստ կը դառնամ այդ աշխարհածանօթ հրաշալի տեսարանին վրայ աչք մը նետելով քանի մը կարեւոր խորհրդածութեամբք քիչ մը խօսելու համար ձակութիւնն ունենալ : Եթէ նիւթոյն ծանրութիւնը և խօսից ընդհանրութիւնն և շիտթ ժամանակիս սղութիւնը ձեռքս կապելով շատ յատկութիւններ կորսնցնել կուտան ալ նէ, զիս օձապտուտ ճամբաներով քալելու ստիպած, սակայն յարգի ընթերցողաց ներողամտութեանը հանդիպելուս մեծ յոյս ունիմ :

Արդ՝ եթէ ժողովրդեան այդ վարմունքն Պապին վարմունքին և անոր ժամանակաւոր իշխանութեանը նկատմամբ արդարանայ, ինչպէս որ բոլոր լուսաւորեալ Եւրոպա միշտ արդարացուցած է և կարդարացնէ զայն, պապականութիւնն, ո՛չ թէ կրօնքն, ինչպէս որ կըսեն պապականք, վտանգի մէջ ձգուած է. վասնզի, նոյն իսկ Հռովմ է պոռացողն՝ թէ իր ժամանակաւոր իշխանութիւնը վերցնել ուզել տալն, կրօնքն աշխարհէս իրօք բառնալ ըսել է. ուստի, իւր զօրաց հանդպած մէկ առաջին անգամի փոքրիկ ձախորդութիւնն անգամ հերթք է իրեն համար՝ աղաղակն բարձրացնելով ըսելու թէ, վերցնալ քրիստոնէութիւնն աշխարհիս երեսէն, վերցնալ : Այս հռովմէական վճիռն ամէն ատենի համար ճշմարիտ կրնար ըլլալ, եթէ անոր ժամանակաւոր իշխանութեանը և հողէր իրաւասութեանը ներքէ չեղող միւս այնչափ միլիոնաւոր ժողովուրդք անոր միայն մարդկային մտքէ հնարուած (ըստ ասից ոմանց) վարդապետութեամբքն քրիստոնէայ չըլլային, և կանթ թէ մինչև որ պապերն իրենց եկեղեցւոյն անսխալ գլուխն և բացարձակ տէրն, և անոր եկեղեցին ալ միմիայն, յորձէ դուրս չիք փրկուրիւն :

չընճանչնային : Եւ ըստ որում , այս բազմաթիւ ժողովուրդներն քրիստոնեայ են  
 ան իրաւամբ որ Հռովմայինն է , և անկախ են , ինչ իրաւամբ որ Հռովմայ եկեղե-  
 ցին է , և միշտ ժամանակաւ որ վտանգալից փոթորիկներէ ալ ազատ ըլլալով , անդր-  
 դուելի և անսասան պիտի մնան իրենց հիմանը վրայ նոյն իսկ Հռովմայ ժամանա-  
 կաւ որ իշխանութեան հոգեվարքին ատենն անգամ , որ եղած անյաջող ջանքերէ  
 և յուսահատութենէ պատճառուած ցաւերէ՝ օրէ օր կը ծանրանայ , անտարբեր և  
 անկարեկից աչքով մը նայելով անոր վրան : Ար հետևի ըսել ուրեմն թէ՛ քրիս-  
 տոնէութիւնն չէ աշխարհէս վերցուողն , այլ պապականութիւնն միայն , որ շատ  
 ուշադրութեան արժանի կարևոր հետևանքներ կրնար բերել իր ետևէն , որոնցմէ  
 զլիսաւորն սն է :

Յիտնալ պէտք է , թէ արդեօք ինչ վստահութիւն , ապահովութիւն և համար-  
 մունք կրնային ունենալ այսուհետև այն հեռաբնակ օտարազգի Հռովմէակա-  
 նութիւնը գրկողներն , տեսնալով Պապերուն բուն ժողովրդեան այս իրաւացի  
 վարմունքն , պապականութեան , գլխէ և ոչ թէ սուրբ գրքերէ , հնարուած խախտու  
 վարդապետութեանցը վրայ հիմնեալ զարտուղի ճամբուն վրայօք , զոր մինչև  
 յայսօր հետևած էին ամենամեծ զգուշութեամբ , վստահութեամբ եւ հաւատար-  
 մութեամբ իբրև միմիայն փրկութեան տանող , անսխալ , անխտոր , ապահով և  
 քաւչարար պողոտայի մը , ի բաց մերժելով միանգամայն ամենայն ատելութեամբ  
 և անարգութեամբ իրենց նախնի եկեղեցւոյն ողջամիտ վարդապետութիւններն  
 և ազգային քաղցր իրաւասութիւններն , ուրանալով ազգայնութեան այն սուրբ  
 անունն , որ զիրենք իբրև մէկ հօր սիրելի զակներ՝ մէկ յարկի տակ ժողուելու կը  
 հրաւիրէ միշտ , ուրկէ դուրս ոչ հոգևոր և ոչ ալ մարմնաւոր ճշմարիտ երջան-  
 կութիւն չկայ և չկրնար ըլլալ ալ :

Ահա ասոնք են ըսի որ աւելի խորհրդածութեանց արժանի են , որովհետև մեծ  
 է Հռովմայ ընդունած հարուածն , ուստի ամենամեծ պիտի ըլլայ իւր անկումն :  
 Ասանդի գրեթէ չկայ ճար մը որ քաղաքական միջոցաւ կարենայ Պապերուն աշ-  
 խարհական իշխանութիւնն և անոր երկիրներն փրկել՝ առանց զանոնք կորսնցնելու  
 վտանգի մէջ ձգելու : Ո՛չ ոք քրիստոնեայ տէրութիւններէն ոչ պաշտօնական  
 և ոչ ալ բարեկամական միջոցով մը կրնայ՝ և ոչ զէնքով միջամուխ ըլլալ այս  
 ազգային մեծ ու ծանր գործոյն , քանզի դատն , որուն իրաւադատութիւնը միայն  
 սրով և արիւնով կրնայ վճարուիլ , ժողովրդեանն է : Ոտքի ելած՝ զայրացած ժո-  
 ղովուրդ մ'ելման գետոց հեղեղներն է , որոց առջին թումպ դնել անկարելի է .  
 անգամ մ'ելած՝ բան մը չկայ որ իրենց առջին տեղի չտայ . և ամենազօրաւոր  
 ծառերն անգամ արմատէն խլելով կառնեն կը տանին և անցած տեղերնին տիղմէն  
 և աւաղէն զատ ուրիշ բան չեն թողուր : Եւ ահա ասիկա է հեղեղին բնութիւնը :  
 Նախօլիի թագաւորն ալ օգնութիւն մը չըկրնար ընել Պապին , որոց երկուքին  
 կենդանութիւնն փոփոխակի իրարմէ կախուած ալ է նէ . վասնզի , ինքն ալ այն մի և  
 նոյն պատժոյն մէջ է Պապին պէս : Ո՛չ ասոր և ոչ անոր զօրքերն ալ չեն կրնար  
 ներկայ վիճակնուն համեմատ՝ բաւական ազդու պաշտպանութիւններ ընել .  
 մանաւանդ որ՝ Սարտենիա ալ յայտնի իւր յարձակումներն օրէ օր կը ծանրացնէ  
 թէ երկու ծովերէն , այսինքն , Միջերկրականէն և Անդրիականէն , եւ թէ այն կող-  
 մերուն ցամաքներէն , թէ Պապին երկիրներուն և թէ Նէապօլսոյ թագաւորութեան  
 հողոյն վրայ : Ահա այսպէս այս երկու վեհապետներն ամէն դիաց ամէն քաղա-

քական միջոցներէ զրկուած, և նիւթաւոր աղղու ճար մըն ալ չգտնալով, իրրև  
բռնաւորութեանց արժանի վարձատրութեամբ մը երկուքին ալ անկանգնելի  
դժբախտ կործանումն անխորշելի է :

Ուրեմն դարձեալ կըսեմ, խորհել պէտք է ճամբայ մը գտնալու և որոշում մ'ընե-  
լու այն հեռաբնակ հռովմէականութեան հետևողաց համար, որ իրենց Հայրենի  
տունէն ելլալով գացած հեղեղքաշին աւազուտն եղեգնեայ խախուտ տուն մը  
կը բնակին, զոր եթէ հեղեղն գայ, ինչպէս որ արդէն եկած է, ի հիմանց կործանէ,  
դուրսն կը մնան. ուր յայնժամ մեծ կըլլայ նեղութիւններն, ցաւերն՝ յուսահա-  
տութիւններն և թշուառութիւններն : Թող շուտով տուն դառնան ուրեմն առանց  
վարանելոյ, այդ՝ կորսուելոյ վտանգին սպառնալեացն ենթակայ՝ Պապական  
դրութեան հետևողքն, տուն, որուն հիմերն հաստատուն են և որուն մէջ միայն  
կրնան գտնալ ճշմարիտ ապահովութիւն մը, ճշմարիտ հանգստութիւն մը,  
ճշմարիտ խաղաղութիւն մը, հողևոր և մարմնաւոր ճշմարիտ երջանկութիւն մը.  
Քանզի՝ թագաւորաց թագաւորն՝ միաբանութիւնն՝ այդ տանն մէջ միայն դրած է  
իւր ոսկիէ աթոռն : Եւ ահա այս միաբանութեան հողին է որ փրկեց իդալացիներն :

Քոռոզն Նախօլի, դեռ շատ ժամանակ չէ որ յամառութեամբ մը Քաղղիոյ և  
Սնգղղիոյ իրեն ըրած առաջարկութիւններն կը մերժէր և անոնց զինեալ սպառ-  
նալեացը զէնքով պատասխանել կը համարձակէր : Այս տարիներս ալ մի թէ նոյնն  
չէր մի, թերևս անկէ ալ ալ աւելի զօրաւոր : Նախօլի հարիւր հազար զօրաց բա-  
նակ մը չէր մի կրնար հանել պատերազմի դաշտն, որուն մեծ մասն կըթեալ  
ըլլային : Քսանէն երսունի չափ կտոր նաւէ բաղկացեալ նաւատորմիդ մը չէր մի  
կրնար ծովն դնել : Սակէ զատ՝ ծովային և ցամաքային ամրութիւններն զինեալ  
վիճակի մը մէջ չէին մի. ամպարներն պատերազմական մթերներով և ուրիշ  
շատ այլ և այլ պաշարներով լեցուն չէին մի : Զէնք երբէք պակաս չէր, իր զօր-  
քերն աշխարհիս ամենէն ընտիրն սեպուած ատենն ալ, Կարիպալտի զօրապետն  
կը համարձակի ափ մը անկանոն զօրքով՝ իւր՝ Սիկիլիոյ վաթսուն և ութն հազար  
բակչով Բալերմ քաղքին վրայ քալելու : Ուրկէ յիշեալ զօրապետն իսպառ բնա-  
ջինջ ընելու համար՝ Նախօլի կանոնաւոր զօրքերէն հինգ հազար պէտք էր և ոչ  
աւելի կամ պակաս, Կարիպալտիինն որչափ ալ որ շատ ըլլար : Բայց Կարի-  
պալտին ըսաց, ու եղաւ : Բալերմի կը ախրէ պատերազմաւ, քառսուն և եօթն հա-  
զար բնակիչով Մէսին քաղքին վրայ կ'ուղղի : Ով՞ կը կարծէր թէ Մէսին իւր ծովային  
զօրաւոր ամրութեանցն կողմանէ և մէջի ունեցած երեսուն հազար կանոնաւոր  
կըթեալ պահապան զօրացն և այլ ամրութեանցն համար կառնուէր, սակայն  
դրեթէ առանց պատերազմի անձնատուր ըլլալու դաշինքն ըրաւ Կարիպալտոյ  
հետ : Սիկիլիայի տիրել լմնցնելէն ետև, Նախօլի՝ աթոռանիստ քաղքին վրայ  
քալելու համարձակութիւնն ձեռք կառնէ :

Ուր պատերազմի ամէն տեսակ անթիւ պատրաստութիւններ, կըթեալ և զինեալ  
զօրաց ահեղգնդեր և կային մեծամեծ զինեալ ամրութիւնք պատրաստ, սակայն Կա-  
րիպալտի միակ միաւոր քաղաքը կը մտնայ ցորեկուան պայծառ լուսոյն : Քաղքի աղ  
գային պահապան զօրքը դէմն ելլալով, իր հպատակութիւնն անոր ոտքին քովն կը  
դնէ : Տէրութեան նաւատորմիդն անոր՝ որ նաւակ մը չունէր Սիկիլիա ելլալու,  
կը հնազանդի, զորինք ալ անմիջապէս Սարաւենիոյ ծովապետին իշխանութեան  
հրամանին տակ զնելու կը հրամայէ : Ահա այն որ իբրև առիւծ մռնչելով

այնչափ ժամանակէ ի վեր ժողովրդեան տկար մունչիւնը կ'արհամարհէր, այսօր, այդ մեծ դօրութեամբն ալ իբրև մեծ պատերազմէ մը մաղապօրծ եղած՝ իր տէրութեան վերջին սահմանները գտնուած և Հռովմային ալ մօտ՝ Աայէթ քաղ-քին ամբութիւններն կը փրկէ դանձն :

Ինչ՞, հրաշք մի կըլլայ կոր արդեօք : Այն, վասնզի, հարիւրաւոր տարիներէ ի վեր ոտից կոխան եղած ժողովուրդը միաբան, միակամ սիրով, գերի ինկած Հայրենեաց ազատութիւնը կուզէ կը փնտռէ, և Աարիպալտին ազատութեան հրեշտակն է՝ ժողովրդեան անոր գիմած ատենը՝ պէտք էր անշուշտ որ հրաշք գործուէր :

Ուր՞ է յաղթութիւնն ու անոր սլտակն, հոն է, ուր որ ժողովրդեան համակամ սիրտն և միաբան գործն է, իսկ այս իդալացի ժողովրդեան եօթն սրով վիրաւորեալ արիւնլուա սիրտն Աարիպալտիին սրտին մէջ է, գործն ալ անոր գործն է, ուրեմն յաղթութիւնն ալ անոր Հայրենեաց սիրոյ զրահապատ լանջացն վրայ, պսակն ալ անոր գլխուն վրայ փնտռելու է : Ուրեմն, ժողովրդեան մ'երջանկութիւնն և թշուառութիւնը, ազատութիւնն ու ստրկութիւնն՝ անոր անհատներուն սրտին մէջ գոյացած համակամութենէն և անոնց միաբան գործակցութենէն կախեալ է : Ասոր տարակոյս մի կայ :

Վասնզի, քանի որ տակաւին կատարեալ սիրով չէին միաբանած իդալացիք, քանի որ տակաւին ատելի երկպառակութիւնը մէջերնին կը տիրէր, քանի որ հայրենեաց ազատութեանը համար կատարեալ անձնուրացութեամբ հոգ չէին տաներ, թէպէտև անոր հողոյն վրայ կապրէին, սակայն անիկա անոնց համար անգութ դահիճներ, խաւարին, անել և ստորերկրեայ խոնաւ բանտեր, չարչարանաց՝ հարստահարութեանց և աքսորանաց տեղեր եղած էր. ուր զիրենք խող-խողիչ սուրը սլտարանոցներուն վրայ կը շողար, զիրենք խղղելու կախաղանը կը բարձրանար, զիրենք կրակին սաստիկ բոցերովն այրելու փայտն կը կուտուէր : Ո՛հ ինչ անուելի տեսարան էր արդեօք ասիկա : Սնտանելի ցաւոց կատաղի սաստկութենէն կը հեծէին դառնագին, սակայն մարդ չ'ըր զգար, կը մունչէին, սակայն անոնց այս տկար մունչիւնը մարդ բանի տեղ չէր դներ, կաղաղակէին լեռներն թնթացնելով, սակայն անոնց աղաղակը մարդ չէր մտիկ ըներ, կուլային աղիողորմ, սակայն մարդ չէր ողորմեր, վերջապէս ողջ ողջ կայրուէին, սակայն մարդ խղճահարեալ չէր կարեկցեր, և ահա այսպիսով դառնագոյն չարիք մը չմնաց որ իրենց գլուխէն չանցնէր, բայց երբոր Հայրենեաց ազատութեան սուրբ սիրովն իբրև զրահ հագուեցան եւ միաբանութեան պաշտելի հոգին իբրև սուր երկ-սայրի մէջքերնին կապեցին՝ երբոր ազատութեան հրեշտակն մեծ դալարա-փոխով, միաբան գործակցութեամբ ի գէն՝ ի գէն հնչելով, չիք ազատութիւն հայրենեաց, հետևաբար չիք ճշմարիտ երջանկութիւն, բայց եթէ արեամբ և սրով վճիռն տուաւ, իսկոյն այն հարիւրաւոր տարիներէ ի վեր արեան մէջ խղ-ղուած տկար աղաղակներն զօրացան, մեռեալ կմախքն կենդանութիւն հաղան՝ զօրացան և յաղթանակեցին թնթանօթներուն անեղակոչ ձայներուն, զի-րենք կըլլել ուզող առիւծակոչ ախոյեանին պղնձապատ լանջն տեղի տուաւ իրենց առջևէն, և ահա այն եռագոյն դրօշն, որ երկար տարիներէ ի վեր իրենց ձեռքին մէջ՝ հայրենեաց գերութիւնն ողբալու և իրենց թշուառութիւն լալու սրբիչ գործիքն եղած էր, գլուխնուն վրայ, Եղալիոյ բարձրութեանցն վրայ ծա-ծանեցաւ, և ազատասէրն Եղալիա, դայն սիրով ողջունեց :

Գարձեալ, վասնդի, երկարեայ ժամանակեայ կրած անտանելի ստրկութեանց փորձերովն ալ հաստատեցին իդալացիք, որ հայրենեաց ազատութիւնն ամէն անգին հարստութիւններէ, ծնողացմէ՝ եղբարցմէ, որդոցմէ և այլն, նաև կեանքէ ալ վեր և յարդի է և թէ իրենց առաջին և սրբազան սրարոքն է. սուտի, ուխտ մի և անջնջելի դրինմիաբանութեամբ առաջի միոյն Աստուծոյ և մարդկան՝ որ չխնայեն իրենց և իրենց որդոցն անմեղարեան վտակներովը գերի ինկած դժբախտ Հայրենեաց հողերն ներկելու, մինչև որ զանիկա ազատուած չտեսնան. և յաջողեցան. քանզի Հայրենեաց ազատութիւնն իրենց միակ նպատակն էր. և Հայրենեացմէ աւելի մեծ հարստութիւն և անկէ աւելի մեծ բարիք մ'ուրիշ ինչ կրնար ըլլալ իրենց համար աշխարհիս վրայ՝ և անկէ զաս' ուրիշ հասարակաց առատագութ մայր մը և իրենց կենդանութեանը միակ պատճառ ուր կրնար ըլլալ, որ զիրենք գըրկելով իրենց վերքերն պատէ, և մեռեալ կենդանութիւնը վերանորոգէ: Ապաքէն՝ թող ծափ զարնելով ցնծայ Եդալիս մէկ ծայրէն միւսը: Թող այդ հողեկեցոյց յաղթութեան՝ սրբազան ազատութեան բերկրառիթ մեծ տօնը հաճութեամբ սրտի և խնդութեամբ կատարէ:

Ո՛վ որ հայրենիք մը չունի, մարդ չէ նա: Ո՛չ թէ հայրենիք մ'ամբողջ, այլ և ափ մը հող չունեցողն անգամ զայն չարժեր: Եթէ ոք այս մեծ ճշմարտութեան հակառակն խորհի, խօսի և դործէ, լաւ էր այնպիսոյն յայնժամ և վայել իսկ էր, բանականացս կարգէն դուրս ելլալով, երթալ շուրջ պատել բազմախորտիկ և բարեւից սեղանի մը բոլորտիքն, ուր որ իւր բախտախնդրութիւնն զինք զիպուածով մը կրնար քարշել տանել սպասելու, յուսալու, մասնակցելու բանի մը, որ այն մեծ սեղանին վշրանքներէն իրեն բաժին կրնար մնալ:

Անդ էր բախտին այնպիսոյ, եթէ զինէ հարեալ խրախճանութիւնն իւր առջին բան մը նետելու մոռնար, ամէն բաժակ որ քամուէր՝ իր սիրտն կը մարէր, աչքերը կը դառնային, ծնկուղներն կը թողային, աղիքներն փորուն մէջ կը գալարուէին, կը տրամելը և կը վշտանար, սակայն ասոնք կրակ կը լլային զինք կուտէին, կուլար, սակայն աչքերէն արտասուք չէր կրնար հանել, այսպիսով աչքերն պաղած՝ բաժակին և սեղանին կը նայէր և վայրկենէ վայրկեան իր տկար և դողդոջուն ծնկուղները ծռուելով՝ մարմնոյն բոլոր շէնքին երկիր կործանելուն կ'սպասէր, եթէ նոր բաժակին յուսովն նորէն քիչ մը հողի կ'առնէր, սակայն ան ալ կը քամուէր: Բայց ինքն շատ հաւատարիմ է, իր ձեռքը չերկնցներ չուղեր և չառներ, թէ պէտև այս հաւատարմութիւնն չէթէ սեղան նստողներուն համար է, այլ և իրեն այդ սեղանին բոլորտիքն գտնուած ատենին համար, և անոնց հետ նստիլն ալ անկարելի է, որովհետև ինք նախ բանականաց կարգէն ելլալ որոշեց, ուտելիքս կտոր մը հաց չէ մի, է մարդ, ըսաւ, ուր որ կարենամ գտնալ, հոն կը կտորեմ, է մարդ ես իմ, անիծեալ իմ, շահուս նայիմ, ուրիշին հողերն ինձի մի տրուած է: Աը մոռնայ եղկելի արարածն և կ'անդիտանայ՝ թէ հայրենեաց ծոցէն դուրս իրեն համար ճշմարիտ և մեծ շահ մը կամ հաց մը չկայ պահուած, և թէ ինք ուրիշին հողերն բառնալու համար աշխարհք եկած կապրէր, որ էր իր ազդն, որմէ կախեալ կայ իր կենդանութիւնն և բարօրութիւնը:

Ահա ասանկ պիտի ըլլար Եդալիսայի ժողովրդեան վիճակն, վարքը և բարքն, եթէ հայրենեաց յարգն ուրքի տակ կոխելով, կամաւոր թախառական ստրուտելով, իւր յոյսն միշտ օտարին և անոր հայրենեացը վրայ դրած անտարբեր աչքով



նայէր իւր կորսուած կամ գերի ինկած բուն հայրենեացը վրայ: Ավ՞ արդեօք իւր յոյսն օտարին վրայ դրաւ ու կշտացաւ: Յանձ մուրացկանի մը փորն երբէք չըկըշտանար, թէև օրը հազար դուռ անցնի. և անոր գրպաները միշտ ծակ են: Մըք թէ օտարին ծառոց հովանին մէկը պարկեցաւ ու անոյշ քուն քնացաւ: Ձէ որ մարդոյս իրեն մոխիր վազած թնդրի (թէնուր) կուտն, օտարի տան լաւուաշէ լաւէն առակի առնուած է: Եւ ատիկա ան է որ իր հայրենիքն չըփընտուեց և անոր ազատութեանը հող չտարաւ, և անկից աւելի մեծ մահացու մեղք որ է յանցանք, որ է վնաս, որ է կորուստ բարեաց և կենաց և անհնարին ապերախտութիւն ինչ կրնայ ըլլալ աշխարիս վրայ մարդոց համար:

Եւ անան այս բաներս էին որ իրենց վեհանձն նախնեաց արժանի որդւոց իդալացւոց սիրտը կը յուզէին միշտ, այս տեսակ ցածութեան և ստրկութեան անտանելի ամօթն և կրած անպատմելի ակամայ զրկանաց և ամէն տեսակ թշուառութեանց չարագոյն հարուածներուն խայթերն էին, որ զիրենք մղեցին և իրենց հասկըցուցին, շատ մեծ դոհեր ընել տալէն ետքը, թէ՛ ուրիշ ճար չկար իրենց համար՝ կենդանի մեռելութենէ մ՞ ազատելու, եթէ ոչ հայրենեաց զիրկն իյնալ, և անոր բարիքը վայելելու և անոր սեղանը նստելու, եթէ ոչ, ի զէն՝ միաբանութեամբ ի զէն պոռալով, անոր ազատութեան փրկանացն համար արիւնին առ հաւատչեայ դնելով՝ ուխտ կնքեն: Սքանչելի առաքինութիւն, որ այս աշխարհիս մէջ շատ քիչերուն բաժին կիյնայ, քանզի, երկար ատենէ անողորմաբար հալածուած, հարատահարուած, անարգուած և իր անտանելի դերութեան շղթայներուն մէջ հալած մաշած ժողովուրդ մը՝ իւր ծառայական հողի հանգնելովն, աւելի երջանիկ կըսեպէ զինք, օտարին փառքովն զուարճանալով՝ սնտախանալ, քան թէ բուն իրենը փնտռելով երջանկանալ, և անոր աղի արտաւօք շաղուուած գողութեան հացէն որովայնապարար ըլլալ, և անոր թունալից բաժակէն ըմպել: Ավ՞ չի գիտեր որ ասանկին համար կորեկէ բլիթ մը՝ տան ճերմակ ցորեն հացէն աւելի անոյշ կըլլայ:

Եւ անան այս քիչերն եղան Բդալիայի ուխտաղիր հայրենասէր մարտիկներն, իմ՞ չըսող և իմաներն չըփնտուողներն, որոց առաքինութիւնն, թէ ի ճակատամարտին, ուր անունին անմահ, յիշատակնին քաղցր և յաւիտենական երախտագիտութեան արժանի թողուցին իրենցմէ ետքի եկողներուն և ներկայ զըտնուողներուն. և թէ սքանչելի գործունէութեամբ պատրաստուելնուն մէջ, զեր ի վերոյ գրեթէ քան զբնութիւնն հրաշացաւ:

Վասնզի, ով կրցաւ գիտնալ անոնց խորհուրդներն, ուր ըրին արդեօք կամ ինչպէս ըրին որ մարդ չըկուայեց, քանի տարին ըրին, որչափ քրտինք թափեցին. իրենց ծախիւքն երկար ճամբորդութիւններ մի չըրին, մեծամեծ վնասներն մի չըհանդիպեցան, ամբողջ ստացուածքնին գրաւել տալով՝ չիհարստահարուեցան մի չըհալածուեցան, տարիներով հայրենիքէն դուրս աստանդական աքսորանաց մէջ մի չեղան, տարիներ անել, մութ, խոնաւ և ստորերկրեայ բանտներն մի չմատնուեցան, և հոն անօթութենէ ու ծարաւութենէ մի չիմեռան. շատերն չիղլխատուեցան, հայր, մայր, կին, եղբայր, քոյր, որդի և ամբողջ ընտանիք, ազգականեր և բարեկամներ թուխերու համակելով:

Ինչո՞ւ համար, որն համար և որ ատենուան համար կրեցին այս ամէն դառնագոյն չարիքներն, մահկանացուներ ըլլալնին չէին մի գիտեր արդեօք: Երած

վաստակներն իրենց անցուցած կենացը համար օգուտ մը չունէր, ներկային՝ շատի  
կը նստէր վրանին. քանզի՝ արիւններն զին պիտի տային, ապագային՝ կեանքին  
կարճ և անստոյգ ըլլալուն համար՝ չէր վստահացուցեր: Եւ ահա հոս է անխմանալի  
զաղտնիքն, որ ըստ իս է այս, հայրենեաց ազատութիւնն և պաշտպանութիւնը՝  
մարդոյս առաջին և սրբազան պարտքն է:

Ժողովուրդ մը կուզէր որ իրեն հայրենիքի մը թողուի, ահա այդ թողողքիւր հայրերն  
են և նախնիքն, և ինք՝ իրմէ ետքիներուն կը ձգէ, որ իւր որդիքն են և յաջորդներն:

Թողմը կեալ ժամանակս ինձ հոս այս միայն ազդէ՝ թէ այս սրբազան պարտքը ճանչ-  
ցողներն եղան իտալացիք, որոնք՝ սով չի կարծէր թէ այն քաջաց և առաքինեաց  
որդիքն են, որ երբեմն Եւրոպա ընկճեցին, Սփրիկէի ձեռք երկնցուցին, Սփ-  
այի շատ մասերուն տիրեցին, հռչակաւորն Սփրատ անցան և հարկւրահազարա-  
ւոր զօրաց բանակներով պերճացեալ թագաւորաց թագաւորներ յաղթելու անու-  
նը վաստկեցին: Եթէ իրենցմէ ետքի եկողներուն ժառանգութիւններ կամ հայ-  
րենիք մը և իրենցմէ առջիններուն ալ երախտագիտութիւն մը թողլոյ պարտքը  
չը ճանչնային, որոնց համար արդեօք յանձնառու կըլլային այդ ամէն տաժանելի աշ-  
խարհակալութիւններուն, կամ գալիք ո՞ր դարերու մէջ անձամբ վայելելու համար:

Այլ արդ՝ եթէ այդ նախնիք օտարինը յախշտակելով իրենց յետնոցը համար հայ-  
րենիք մը թողուլն իրենց պարտք սեպեցին, և ասոր հակառակն, չը թողուլը մեծ  
պարտազանցութիւն, հապա առոնք՝ անոնց որդիքն և այն թողուած հայրենեաց  
ժառանգորդներն՝ զանիկա կորուսեալ մը գտնալու պէս՝ աղատելու և պահելու  
համար՝ որչափ պարտաւոր չէին արդեօք, և զանցառութեամբ մտացութեան մէջ  
ձգելով, քանի՞ ապերախտութիւն գործած չէին ըլլար:

Սմե՛նայն բարեմասնութեամբ զարդարեալ, հաստատամիտ, վստահ, վեհանձն  
ազնիւ ազգ, Եղալացի: Ով՞ քեզմէ մէկը արդեօք այսպիսի ատելի ցածութիւն մ'ը-  
նելու զիջաւ, հարցնելով թէ Կարիպալտին սով էր արդեօք, ո՞ր ծնած էր, ո՞րուն  
տղայն էր: Չսաւ, զիտես թէ նանրասէր աշխարհիս անտախտիս զիր ունայնութիւնը  
արհամարհելու համար, Չաստուածորդիդ սով դու Կարէնեան պալհաւ, արդեօք  
վե՛ն մասեաց մառախլապատ երկնածիր զազաթիւններէն երևան ելած՝ հինաւորց  
անմահից ժողովքներէն սլացած Եղալիոյ հորիզոնին վրայ կիջնաւ, կամ թէ զը-  
ժոխմբերն Էտնայ մի քեզ դուրս ժայթքեց. և կամ թէ Հռովմայ կամ Նախօլիի  
հոյակապ պալատներէն մէկուն մէջ մի ծնար. քու հայրդ ո՞ր թագաւորն է ու քու  
մայրդ ո՞ր թագահին, ո՞ր դուքսն կամ ո՞ր դքսուհին, կամ թէ Նախօլիի տէ-  
րութեան հողոյն վրայ Քօլ Սումէնօ քաղքին տնակներէն մէկուն մէջ մի ծնար,  
քու հայրդ երկրագործ մի է՝ չէնէ հովիւ, ձկնորս չէնէ նաւաստի: Չրա՞ մանաւանդ  
թէ իրեն վայելուչ չըսեպեց ընելն ալ, այս անտեղի և յարդ չունեցող հարցմունք-  
ներէն և հետազօտութիւններէն մէկն ալ, Սղնիւն Եղալիա: Վասնզի, զիտէր ի  
սկզբանէ անտի ունեցած լուսովն և հաստատուն փորձառութեամբն Եղալիա, որ  
այժմեան՝ մարդ և մարդկութիւն ճանչցող, լուսաւորեալ աշխարհա ալ ամէն իրաց  
իր յատկութիւնը կուտայ, ոսկին ոսկի, արծաթն արծաթ, և մարդն ալ մարդ կը  
ճանչնայ, չէ՞թէ ոսկին կամ արծաթը կը մարդացնէ, անոնց այլ և այլ թագաւոր-  
ներու թագուհիներու, դքսերու և դքսուհիներու, պարոն և պարոնուհիներու և այլն  
այս կամ այն պատուոյ և աստիճանի սին տխրոսներ տալով: Եւ ինչո՞ւ պիտի  
ստիպուիմ արդեօք թագաւորութեանց և իշխանութեանց՝ ինչպէս սկսուելոյն

վըրայօք դիտութիւն մը տալու համար՝ զէպ անոր սղտոր ակն ի վեր ելլալ :

Շատ էր ան ատեն ուրեմն քաջ և առաքինի աղատարարին Նդալիոյ իր հայրենեացն աղատութեան համար՝ իր արիւնը թափելու յաւիտենական ուխտ մը, կատարեալ անձնուրացութիւն մը և արիական քաջութեամբ մեռնելն անարի վատութեամբ անոր ողորմելի գերութիւնը տեսնալէն աւելի ընտրելն :

Հերիք էր նաև սլատերազմասէր վեհ աղզին Նդալական, կատարեալ վատահութեամբ տասն (1) միլիոնէ բազկացեալ ժողովրդեան մը համակրութիւնը, հաճութիւնը և համարմունքը այդ աղատարարին վրայ զնել և անոր յանձնել աղատութեան այդ մեծ գործոյն կարգադրութիւնն և տնօրէնութիւնը, ամէն օրնութիւն անոր ձեռքին տակ կենդրոնացնել, ամէն զօրաւոր խորհուրդներ և տեղեկութիւններ անոր տալ և որոշումներն անկէ սպասել :

Վասնզի, ամէն անձնական շահախնդրութիւն և սնափառութիւն մտքերնուն և սրտերնուն մէջէն արտաքսած՝ ամենուն փնտռածը՝ Հայրենեաց աղատութիւնն էր. ո՛վ որ շատ կը վաղէր, քանի որ ուրիշներն անոյժ քնով կը քնանային, ինք քունը աչքէն կտրած, ինչ ընելն և ինչպէս գործելոյն վըրայօք կը խորհէր. մտօքն ամէն վայրկեան կը վերանար, Հայրենեաց ամէն սահմաններն կը սլտըտէր, անոր լերանցը, դաշտացը վրայ բռնելիք դրիցը և կրճերուն շաղուացը ծրագիրն կընէր, ունեցած զօրքն ու զօրութիւնը համեմատութեան կառնէր, յառաջ կը դիմէր, ճակատ կուտար, ետ կը մղուէր, զանոնք կշռքի զնելով՝ հեռակէլիք յաջողութեանց ու ճախորդութեանցը նախատես կըլլար, քանի որ ուրիշներն գլուխնին կախած, ետ իմ շահուս նայիմ կըսէին, ինք՝ Հայրենեաց աղատութեանը նուիրուածներուն զօրաւորները կը քաջալերէր, տկարները կը զօրացնէր, և իր ձայնը վերցուցած ամէն կարգի և աստիճանի իր Նդալացի աղզակիցներն միութեան պաշտելի դրօշակին տակ զիմելու կը հրաւիրէր, ո՛ւր որ ըլլային, ո՛ր խոշորներն որ ծածկուած ըլլային, այլևայլ սլատճառներով աղզէն զատուած ըլլալով, ինչպէս ըսի, ո՛վ որ ըլլային և ինչ գործ ու ինչ արհեստ որ ունենային, վասնզի՝ այդ միութիւնը չէթէ միայն բարոյական ըլլալու էր, այլ և նիւթական, կորսուած ոչխար մը գտնալու պէս՝ Նդալացի անուն կրելն մուրցող անյայտ մնացած մարդիկն անզամ աղզին ծոցը ժողվելով, ներքին և արտաքին միութիւն մը կազմել պէտք էր, այս ամէնն ընելէն զատ՝ թուրը վերցուցած, կուրծքը կրակին բացած, իբրև առիւծ կը մռնչէր և իբրև կայծակն կ'որոտար :

Սհան ճշմարիտ Նդալացին զնա կը սէպէին, իման ճշմարիտ հայրենասէրն, ճշմարիտ զօրապետն ու հրամանատարն ան էր, և որ ամէնատերեւելին եղաւ Վարիպալաի, որ գովելի հանճարոյն և սլատերազմական հնարադիտութեամբն գործած արիական քաջութիւնները և ստացած յաղթութիւնները սլատմութեանց մէջ անմահ յիշատակի արձաններ կանգնեց՝ և իւր այս չնաշխարհիկ առաքինական փառքն, դերազանցեց ան ամէնը որ իրմէ առաջ եղող նախնիքն արիական քաջութեամբ պայծառացան. վասնզի, եթէ անոնք օտարինը յափշտակելով յաղթող կը հանդիսանային, Վարիպալաի բուն գերի ինկած հայրենիքն աղատելով քաջացաւ : Հնապա զօրքերն ո՛վ ըլլալու էին, որովհետև կրթեալ և զինեալ յայտնի մէկ զինուոր մը չունէր հայրենասէրն Նդալիա : Գու մի զարմանար երբոր քեզ թուեմ ո՛վ ըլլալնին, զանց առնելով միւս այն ամէնքն, որոնց գովելի գործքերն արդէն յայտնի է ամենուն :

Մէկ ձեռքն արօրին խոփը՝ միւսը խարազանը և ծոցն ալ քանի մը կոշտ լեցու-

ցած, միութեան պաշտելի դրօշակին տակ վաղող մաճկալն, մէկ ձեռքը խթանաւոր վարոցն, միւսն ալ սամօտին վրան սամի մը, ծոցն ալ քանի մը մանր քար զըրած՝ փութացող պատանեակ հօտաղն, մէկ ձեռքն իր բիրը և միւսը՝ ոչխարն խողելու մկրատն, թաղիքն ալ իբրև վահան թևին փաթթած՝ վաղող հովիւն. բահը մէկ ուսին՝ թին ալ միւսը՝ վաղող ջրտկուորն. գերանդին ուսին՝ խարտոցն ալ մէկ ձեռքը՝ վաղող քաղուորն, կացինը մէկ ձեռքը՝ միւսն ալ կաղնի մը՝ վաղող սարուորն. մէկ ձեռքն օրնի սայլի ցիցն և միւսն ալ ճոպանը կամ լուծին փոկը, վաղող օրնէուորն և այլն. մէկը սարէն, մէկը ձորէն, մէկը դաշտէն, մէկը պարէն, ձեռքերնին կտոր մ'երկաթ, կտոր մը քար, կտոր մը փայտ՝ վաղող երխտասարդներն, հայրենեաց միակ յոյսերն. մկրատը մէկ ձեռքը՝ միւսը իր բիրը՝ վաղող դերձակն՝ կուանը ձեռքը վաղող երկաթագործն, ոտքերնին գետին զարնելով՝ փոշի հանող և քարձրերէն քար զլտորող ծերերն: Վանանց ցեղէն. թաթակիշը մէջքն՝ անթեղնոցը մէկ ձեռքը՝ միւսը կեռակիշը՝ վաղող տան տիկինը, մէկ ձեռքը աւելը՝ միւսը խանդիշակն՝ տուն աւելող վաղող կինը, փոցդերնին ձեռքերը վաղող փոցդուոր հարսներն. երկայն մազերը գլուխը փաթթած՝ մանգաղն ձեռքը՝ վաղող հասկաքաղ օրիորդն. այս ամենէն ետքը՝ հեռուանց կը տեսնուէր իր մեծ փառքովն Հնձոց Թօփալ Թուրօ, գլղլած զառամեալ պառաւն, որ մածնի կճուճն շալկած՝ երկու կողմին ճոճալով՝ փոշին երկինքը մառախուղին և ամպերուն խառնած կուգար, վերջին հօրնութիւնը կարգալու: Ահա ասոնք էին Բղալիոյ յաղթականներն և ճշմարիտ հայրենասէրներն. ուստի, և՛ հայրենեաց սիրուն և՛ երախտագիտութեանը արժանիներն, որ չըտեսնուած նուիրական անձնուրացութեամբ իրենց բոլոր հարատութիւններն և իրենց կեանքը հայրենեաց ազատութեանը համար զոհելու չըխնայեցին, որով աւելի վեր և յարգի եղան այն ամէն հմուտ զօրապետներէն, կըրթեալ զինուորներէն և այն մեծամեծ՝ զեղիութեան և անառակութեան մէջ ընկըմուած հարուստներէն, որոնք որ ոչ քայլ մը հայրենեաց ազատութեանը համար առին, և ոչ ալ լումայ մը անոր սիրուն համար տուին:

Արդարև մեծ եղաւ Բղալիոյ յաղթականին նուիրական անձնուրացութեան առաքինութիւնն. վասնզի, անոնցմէ ո՞ր մէկն զիտնալ ուղեց Վարիպալտոյ խորհուրդներն, անոր ճակատամարտի պատկերն, որուն յաջող կամ ձախող կարգադրուելուն կամ անկէ գալիք աղէկ կամ գէշ հետեանքներուն վրայ ո՞վ կասկածեցաւ արդեօք, թնթանօթներուն գոռացած և հրացանաց պայթած ատենն անգամ: Վարիպալտի շրթանց մէկ պարզ շարժմամբը՝ զօրքը կը քալէր, գուցէ ուրն ալ չըզիտնալով՝ և անանկ ըլլալ ալ պէտք էր. վասնզի. քաղաքական օրէնքներն և հրամաններն տանեաց վրայ, հրապարակաց մէջ, փողոցներուն անկիւնը կը տրուի և տրուելու է, իսկ պատերազմի խորհուրդները սրտին խորշերուն մէջ կըլլան, և անոր պատկերը հոն կը դժադրուի:

Չեմ գիտեր, թէ այդ հայրենասէր մարտիկներուն ալ ո՞ր մէկ առաքինութիւնը յիշելու է. սիրով յանձնառու եղած և կրած շատ տեսակ նեղութիւններէն և գործերէն մէկ երկնքն մի: Չէնք չունեցող՝ ունեցողի պէս. դիշերն գուրսը վաղող անձրևներուն և փչող սաստիկ հովերուն տակ անվրան, վրաներ ունեցողի պէս. օրը սոյսչափ կամ սոյնչափ մղոն քալող յոգնողներ, հանդիստ նստողներու պէս. արեգդէմ կողերուն այրիչ աւազային հողերուն և քարերուն վրայ արևին տաքութենէն այրուող և անոր կրակէն խանձուողներ, զով և զուարճալի հովանոցներ

եզոզի պէս, շատ անգամ զիշեր զիշերի վրայ քնհատ մնացողներ, անոյշ քունէ մ'արգնցողի պէս, շատ անգամ անօթի՝ կուշտ եղողներու պէս, շատ անգամ մերկ բոսիկ, հազուադ կապուողներու պէս և այլն. այս ամէնը և ասկից ուրիշ շատերը հայրենեաց սիրոյն համար կրելէն ետև ալ՝ բերաներէն տրտունջ մը չելաւ. բաց ասկէ, զոր հառաչելով կրսէին. ահ քաղցրիկ հայրենիք, մեր ծննդեանը, սննդեանը և կենաց պատճառն, մինչև ցերբ պիտի համբերենք, մեր աչքը կը սոսկայ և սիրտը կը ճմլի քանի որ քու ոգորմելի գերութեանդ ու ստրկութեանդ վրայ կը նայինք: Ազէ, ոգորմէ մեր խղճալիներուս որ քու ազատութեանդ համար թեւերնիս պարզած՝ բազուկնիս երկնցուցած և կուրծքերնիս բացած՝ մեր արիւնը թափելու կ'սպասեմք ժամէ ժամ, վասնդի, գուցէ վհատեալ թուլնանք ու դու այդ վիճակիդ մէջ մնաս, ինչպէս որ մեզմէ շատերն թուլցան ու մէկդի քաշուեցան, սակայն քեզ կապող շղթայքն երբէք չըթուլցան:

Այս ամէն առաքինութիւններն ու գործուած քաջութիւնները յիշելէս ետքն՝ ուրիշ աւելի կարևոր բան մ'ալ կայ զոր մոռնալ ինձ հոս անկարելի է: Ստիպեալ եմ կարճ խօսքով և պարզ՝ ըսել թէ աբդեօք՝ այսչափ միլիոն դահեկաններ գնաց և կերթայ տակաւին և պիտի երթայ, ուրիշ եկաւ կամ ո՞վ սուաւ այս հայրենասէր նահատակաց, որոնցմով կարող եղան պատերազմի ծախքը հոգալ կամ վճարել: Նաւակ մը շինել տալով Սիկիլիա անցնելու, հրացան մը և գնդակ մը ձեռք բերելու զինը չունէին. չեմ պնդեր թէ այսչափս ալ գոնէ մարդ ընելու կարող չըլլայ, բայց իբր բազկաւ գործողներ խօսինք ու չէ՞ թէ շրթամբք խօսքը սահեցնողներ ըլլանք, մանաւանդ թէ՞ ճշմարիտն գրուցենք. ո՞վ կայ որ իւր բուն ծախիւ քն պատերազմի երթայ և ո՞վ է որ ուրիշին ծախքը հոգայ: Նսկ իդալացի հայրենասէրը չէ՞ թէ միայն իր օրական պարէնը բերնէն կտրելով հայրենեաց ազատութեանը զոհ ըրաւ՝ այլև կեանքն ալ դրաւ անոր համար: Ունեցողներն ալ այս մի և նոյն կրքով բորբոքեցան, չէ՞ թէ իրենց ընչից աւելորդքն այլ և բուն ինչքերնին տըռուին: Սեղանաւորները՝ չէ՞ թէ իրենց դրամոց գումարին շահը միայն տուին, այլ և բուն իսկ դրամագլուխը գոհեցին: Սուստասիրտ վաճառականը իւր ամենէն ընտիր ծրարները բացաւ: Կը թողում յիշելու թէ՞ որչափ ազնիւ մայրեր իրենց տօնին ընտիր ընտիր հալուըներն սնտուկներէն չըհանեցին և իրենց վզէն կախուած ոսկիէ կամ մարդարտէ և կամ այլ ընտիր նիւթերէ մանեակներն վար չառին, քանի՞ օրիորդներ իրենց ճակտէն ոսկիները չըկտրեցին. ուսումնականներն զրքերնին ծախելով հրացան մի չառին, գիտելով թէ հայրենեաց ազատութեանը համար ճաթող հրացան մը հազար իմ սեռականէն աւելի կարժէր. երկրագործը իւր զոյգ մը եղան մէկը չըծախեց մի. առատաձեռ արհեստաւորն իւր ճակտի քըրտինքին զինը չըտուաւ: Սհա՛ այսպէս այլ և այլ կարգի և աստիճանի հայրենասէր անձինք իրենց առատ ձեռքն բացին այն հասարակաց մօրն հայրենեաց համար, որմէ ունէին ինչ որ ունէին՝ և այս սքանչելի իմաստութիւնն ու առաքինութիւնը մեծ իմաստասիրին և առաքինասէր իդալիոյ պահուած էր: Ան միայն գիտէ կամ հասկցած է այս մեծ ճշմարտութեանց զօրութիւնն, թէ վաստկիլն վատնելու կամ ծախք ընելու համար է. ցանկու օրն ուրիշ, քաղելունն ալ ուրիշ է. եթէ հարըստութիւն վաստկիլն կամ դիզելն մարդոյս մէկ պարտքն է, հայրենեաց ազատութեանը համար տալն ե՞թէն է: Ե՛ մարդ, լաւ, ես, հիմա տամ, ետքն ինչ ընեմ, մանաւանդ թէ՛ արմաւն ուղղակի բերնիս մէջ չիյնար, ուստի ամենէն լաւն է որ

կարպետիս տակ դնեմ ու վրան նստիմ, չըսաւ խոհեմն իղալացի : Ինչ ընելից հասկնալ կուղես, դու միշտ տուր միայն, ետքէն պիտի գիտնաս ատիկա. չէ՛ նէ՛ քու լալուդ ու ողբալուդ ողորմելի ձայնը և հեծութեանդ դռնչիւնը թող ականջներս չըխցընեն : Ով՞ կուլայ կը մաղկտի, և ով կը հեծէ. գերին, չքաւորն և թշուառն, և ով է այս ամէնն. ան է, որն որ իր Հայրենեաց ազատութեանը համար իւր բուն ստացուածքն և կեանքը չտար. շատ կը չափէ ու բնաւ չըձևեր, ձևող մը կանց, վրան կը կասկածի կըլլանց մի չըլլար մի կըսէ. ես՛ իմ որսս դրանս առջին դալ կ'ուղեմ, չէ՛նէ, գնդակիս մեղք է. և առաջին ընելիք քայլս ծունկներս կը ջարդէ : Եւ ահա, որոն է՛ չիգար ու բաց դռներէն անդամ ներս չը մտնար :

Ահա Հայրենիքն ասանկ բան մ'է՛ զոր մարդ ծնած ատէնը հետ չբերեր և իւր մարմինը կազմող մասունքներէն, արիւնէն արիւն, ոսկրէն ոսկր, ջիղերէն ջիղ չէ, սակայն անանկ կարևոր պիտոյքն է մարդոյս՝ որուն գոյութիւնն անկէ կախուած է : Վերջապէս Հայրենիքն ափ մը հող է, ուր մարդ իւր մարմնոյն էական մասունքներն բաղկացընող նիւթերն և սնութիւններն կընդունէ և իր կենդանութեանն օգը կըծծէ : Առանց հայրենաց ո՛չ մարդ կայ և ո՛չ ալ մարդկութիւն այսինքն է մարդոյ էական գոյութիւն (բացի հողոյն) չկայ և չկրնար ալ ըլլալ : Ասկից ետքն կուգան Աստուած Աստուածարան, աւետարան աւետարանիչ, լեզու լեզուագիտութիւն, ուսումն ուսումնականութիւն, գիտութիւն գիտնական, արհեստ արհեստաւոր և այլն մարդոյս ապրելոյն և կենցաղափարուելուն եղանակներն աւելի կամ պակաս դիւրին և դուարճալի գործելոյ համար :

Մի թէ խելառեցայ. ո՛չ. թող հայրենեաց յարգն ճանչցող իղալացիք, որ հարիւրաւոր տարիներէ հետէ փորձառութեան մէջ ծայրացած են, վկայեն ինձ :

Չընստաւ ու չըմտածեց այդ փորձառութեան մեծ վարժապետն Եղալիա, մեծամեծ դպրոցներ բանալու երազներովը և անոր խաղալիքներովն խաղալ, լեզու, լեզուագիտութիւն, ուսումն ուսումնականութիւն և այլն գուցէ օր մը պէտք կըլլայ, ըսելով, անօգուտ ջանքեր ընել : Այս դպրոցին մէջ թող երկու հարիւր աշակերտ այս լեզուս կամ այն, այս ուսմունքն կամ միւսը՝ սկսին մէկէն, այս մայրաքաղաքիս կամ այն հեռաւոր գաւառներէն կամ նահանգներէն մէկուն մէջ, և թող այդ աշակերտը հոս նստի, պերեշտ ունի աղքատ է և դրսեցի, կամ բնաւ չը նստի. թող մէկալնոնք ալ խաղ տաղ կանչեն, որ ականջնիս հեշտանայ. թող միւսն ալ հոն նստի՞, տեղացի է փոքր է հարուստ է չըղիտեմ ինչ է, որովհետեւ մենք կարդ կանոն ունինք, չըսեմ անօրէնութիւն և անիրաւութիւն ունինք. մեր կամքն, մեր կիրքն, մեր սրտի ուղածն մեր կանոնն է և կարգն, չըսաւ ու չըբաւ, չըվիճեց ու չըվճռեց : Մի թէ մարդ իրեն բրդածն ուտելու և ցանածն ալ քաղելու պարտաւոր չէ մի :

Խաւարին բարբարոս, չէ որ լուսոյն մէջ կը տեսնան մարդիկ ինչ որ կը տեսնան, միաբանութիւն, միութիւն, հայրենասիրութիւն և այլն : Ճշմարիտ է, բայց իւրաքանչիւրոք իւր սրտի ուղածէն և աչքին հաճելի երեցածէն զատ՝ ուրիշ բան չըտեսաւ, և խաւարին ժողվածն՝ լոյս կարծուածը ցրուեց : Սմէն տեսնող կարծուածներն իրենց կիրքերն յառաջ տանելն, անձնական շահերը փնտռելն միայն տեսան, իսկ հայրենիքն և անոր ճշմարիտ բարիքը տեսնող և որոնող շիւ մը, միականի մը մէկ մըն ալ չեղաւ : Սմենահարուստ մ'իր քօսակն ազդին գրպանը կրնայ դնել, ամենազիտուն մ'անոր տուններն գրքերով և դպրոցները դասերով կրնայ լեցնել, ալեղարդ մուսայ մը՝ իւր ողբական փանդիւն սրտին վրայ դնելով՝

Հայրենեաց ամայի աւերակներուն զիմացը նստած, գլուխը մոխիր ցանած՝ աչքերը հող դրած, իւր արտասուաց աղի վառակներով անոր հազար հազարամեայ փոշիացեալ փառքերը կրնայ թրջելով ողողել՝ և իւր զմայլեցուցիչ քաղցրալուր նուազներով անոր խոր լուծեան մէջ եղող մայրի անտառաց ամպումած գլուխներն և երկնածիր լերանց գաղաթունքը զլուծելով կրնայ խոնարհեցնել, նաև ահարկու խորունկ ձորերուն արծականքը կրնայ կրկնել տալ, սակայն առանց ո՛չ մէկը և ո՛չ միւսը հայրենասէր ըլլալու և անոր ճշմարիտ փառքն ու բարիքը փնտռելու: Ով՞ կրնայ ուրանալ թէ՛ ստուերին երկնցող ձեռք մը դատարկ էտ չըդատնար և տանը մէջ քաջ զօրականի մը պէս թուր խաղցնողը ճակատամարտին մէջ յաղթութիւն գործած չըսեալուիր: Ասանկ, խօսելն ուրիշ բան է, գործելն ալ ուրիշ, բայց հողին ամենէն անոյշ է. ով արդեօք անիկա սուրին բերանը կը դնէ:

Այս ամէն ճշմարտութիւններս ճանչնալուն համար էր Նդալիա՝ որ ծառին զօրաւոր բունը թողլով տկար ճուղերուն իր ձեռքը չերկնցուց կամ անոնց փաթթաուելով իւր հողին ազատել չուզեց, որ է ըսել թէ՛ բուն էական և կարևոր եղածը թողլով դպրոցներ բանալու ետևէ կայն չ'եղաւ:

Վասնզի, վեհանձնութեանը չափ խելացի և խոհեմ ալ էր Նդալիա, օր մը պէտք կըլլայ ըսելը չէր վայլեր իրեն, և իր խելքին ու բանականութեանը դէմ դուրս, այլ հիմա, ամենէն առաջ պէտք եղածն ընելու է ըսել կը վայլեր իրեն (թէպէտև դպրոցաց և դիտութեանց յարգն երբէք չըմտցուիր): Արովհետև զիտէր թէ երկու հարիւր տղայ մէկէն լեզուագէտ կայն չէին կրնար ըլլալ, սակայն անոնցմէ ամէն մէկը մէկմէկ բան կրնային սովորիլ. մէկը լեզուագէտ, մէկը տառմանական, միւսը արհեստաւոր և մէկ ուրիշն ալ մարդարէ կայն կրնար ըլլալ, երբոր պէտք ըլլար: Միթէ մարդ իւր ամէն առուր կերած հացին պէս դիտցածին ալ՝ դէմ կը գործէ: Չէ որ ինք է ըսողն թէ ոմն լեզուագէտ և ոմն մարդարէ կայն կըլլայ, չէ թէ ամենեքեան մարդարէ, ամենեքեան լեզուագէտ կայն կըլլան: Այս վարպետութեան խաղերը չըխաղցաւ Նդալիա կըսեմ՝ իւր սնափառութիւնները յագեցնելու համար: Այ մեյ մը խօսք տուիք ի՛նչ ընեմք, գո՛նե աչքի կրկնող և կրից ալ ծառայող շիւցուր զրայ բաւե մ' ընեմք ըսելով, անմեղ և անփորձ մանկաւոյն յախտենական թշուառութեանը պատճառ ըլլալ չ'ուզեց, վասնզի ամենակարևորը կար ընելիք, որ էր հայրենեաց ազատութիւնը:

Թող տուր այդ մանկաւոյն, ըսելու իրաւունքն ունէր ուրեմն իմաստունն Նդալիա այդ ունայն ճամբուն հետևողացն, որ բնութիւնն ու կարօտութիւնը զինք հայրենասիրութեան առաջնորդէ: Երբ որ այդ բանը դու չես կրնար ընել, քու անոր տուած սնտոի յոյսերովդ և չզղած օտարածին ուսմունքներովդ ճամբայ ցուցնող մտլար ուղեցոյցներ մ' ըլլար: Դու երբոր սկզբունք և նպատակ չ'ունիս, քու ճամբովդ քալողները դուրսը կը մնան, ինչպէս որ արդէն շատերը մնացին, որոց անկանդները կործանումն աւաղելի է: Դու ծնածդ ամփոփող չես, կորսնցուցածդ ալ փնտռող: Այս ինչ լեզուն սորվելով այն ինչ հարուստին գրագիրը կըլլաս ըսելդ քեզի գրագիր կըլլայ ըսել չէ: Այն ինչ տէրութեան ծախիւքն՝ այն ինչ ուսմունքն ու արհեստն ընելով անոր զօրավարը կըլլաս ըսելդ ալ քեզի զօրավար պիտի ըլլայ ըսել չէ, կը համարձակիմ արդեօք ըսելու թէ քու ազգդ ալ չէ այնուհետև, և քու անունդ կրելն անդամ անոր մեծ արհամարհանք մըն է՝ և քու այն մասին զգացած ուրախութիւնդ ու ունեցած պարծանքդ քեզի համար ակնկոր



ցածութիւն մըն է և քու աւազելի աւերդ կը ժողովացնէ : Ա՛վ որ ասոր հակառակը քեզ համոզելու ջանք բնէ և հասկցնէ, գեացիր, որ այնպիսին քու մեծ արեանարբու թշնամիդ է : Թէ որ դու քու ծանրութիւնդ ու վեհանձնութիւնդ կորսնցընելով՝ տղոց հետ դինէտունը և աղջկանց հետ ալ պարը մտար՝ անիկա քու ետեկէ մի ձգեր : Թէ որ դու մտովի եռացող կաթսային հոտովը դմայլած՝ աւելի աղէկ սեպեցիր անոր բոլորափքը պտտելով՝ սակոր մըն ալ դու կրծելուդ յոյսն ունենալ քան թէ կորսուած հայրենիքդ փնտռելով, անոր արգար եղն և մեղքը վայելել անիկա քեզի մի նմանցներ :

Թէ որ դու քու նախնիքներէդ ուսեալ՝ հայրենեաց առաքինութեան ճամբայն քարոսէ ջերմեռանդութեամբ քարոզած ժամանակդ՝ ականջներդ կապար կը հալեցնես կը գոցես, մանաւանդ երբոր կը տեսնաս թէ մէկն այն ճամբով քալելով արեան ծովերու մէջ խղզուելու վրայ է, դու եղերքը՝ դինիէդ՝ խաղէդ ու խընտումէդ խենեշացած՝ ձեռքդ անդամ չես երկնցներ անոր օնօռ մը կայ ըսելով : Ե՛, ատ ինչ ցած ու դժուար բան է, օնօռիս կը վայելէ մի. ատ ինչ խենդութիւն, ասդին հանգիստ և հանգարտ կեցած ատենս : Մարդ՝ ծնած տեղը չըփնտուեր, փորը կշտացած տեղը կը փնտուէ. փորս ո՛ր որ կը կշտանայ, ևս հոն նայիմ : Հայրենիքն ինչ է, է խէնդ մարդ : Ճշմարիտ է ըսածդ ու խելքով ու զիտութեամբ լի, նժոյզ ճիւղն փորն ալ մարդագետինը կը կշտանայ ու անոր փնտուած միշտ անիկա միայն է և տեսածն ալ միայն ասիկա, մարդագետինն, է. գլուխ կախած չորս դին չընայելով ըրած ամէն ջանքն իր փորը լեցնելն է, թէ որ արօտին տէրը անոր թող տայ. ահա այս ամէնը՝ խօսած ու գործած ատենդ՝ անիկա քու օրինակիդ մի հետեցընէր : Թէ որ քու հիմակուան վարկդ, բարձր պատիւդ, լեզու և լեզուադիտութիւն ևայլն, մարդ ու մարդկութիւն, միութիւն և միաբանութիւն վարքդ ու բարքդ ալ այդ օնօռիս վրայ կայացուցած ևս, աւազելի ևս դու բոլոր աշխարհիս մարդոցմէն. վասնի՛ր սո՛ւտ է ասիկա և ունայն և թէ ճշմարիտ մը չունենալուդ կրկնած արձագանդդ է և անոր նշանն :

Այդ ձագերուն իրենց բունէն զատ ուրիշ բուն մի ցուցներ, ուր դինքը չէն ընդունիր : Թո՛ղ տուր որ իրենց բունին վրայ մեծնան՝ որ երբ կարող ըլլան թուշելու՝ նորէն հոն դառնան : Դու ծառայական հողի հողնելովդ ուրիշին ծառայ եղար թո՛ղ տուր ասոր՝ որ իւր տանը ծառայն ըլլալ սորվի, քան թէ օտարին տան տէրն կամ մատակարարը :

Իւր սկիզբէն հետէ մինչև ցայսօր կարդացած արդիւնաւոր դասերուն մեկ փորձառութիւններովն՝ իմաստութեան և զիտութեան մէջ ծայրացած հմուտ մեկ վարժապետն Եղալիա՝ անանկ դպրոց մը բանալու և դաս մը տալու է որ հիմա այս ժամուս պէտք է և անհրաժեշտ միշտ պէտք է, որն որ իւր մէջը պարունակէ ամէնը և գոռցէ օր մը պետք կը լրացնէրը. և էր այս, հայրենեաց ազատութեանը համար միութիւն և միաբանութիւն :

Ահա այս փիլիսոփայական դպրոցը բացաւ իմաստունն Եղալիա և ասոր վրայ խորհեցաւ ու խօսեցաւ և ասոր վրայ վիճեց ու ասիկա վճռեց : Դպրոց մը՝ որո՞ւ տարածութիւնը յիսուն ու չորս միլիոն քառակուսի մղոն մէղր և անոր աշակերտաց թիւն ալ տասն միլիոն ժողովուրդ ըլլալու էր : Դպրոց մը՝ ուր մօրն արգանդ իջնողնէն սկսեալ մինչև փորուած գերեզմանին ավանցը վրայ դեղերող բանական էակը դաս կարդալու էր : Դաս մը՝ որով կամ դերի ինկած հայրենիք





ազատելով իրեն անտանելի ալեակոյրն և ողորմելի թշուառութեանցը վախճան մը տար Բդալիա, կամ Սասուն՝ այն քովէն վաճառուած և իր քովն ալ բնաւ տեղի չունեցած այս վճիռն տար. Սասունը մեզի առանկ ըրեր է, ինչ ընենք մենք, մեր մեղքն է, մեր բախտն է, անոր համար մեր պարտքն է քաշելու ենք: Իրաւունք ունէր Բդալիա և անելի չառ և իրաւացի էր որ աւելի բացայայտ խօսելով ըսէր, մեր յանցանքն է, մեր անմիութիւնն ու անմիարանութիւնն է, մեր անհոգութիւնն ու մեր ցածութիւնը, մեր թուլամորթ մեղկութիւնն ու մեր գեշութիւնն է ու չէ՛ թէ մեր մեղքն ևայլն, ասոր համար ինչ որ կրենք արժանի ենք մենք: Բայց իրեն վրայ բռնացեալներն ըսին անոր թէ չէ՛, առջի ըսածն երդ լնա էին և ուղիղ քու մեղքդ է ևայլն. և թէ Սասունը է մարդուս մէջք թուրը կապողը և սուրն ալ անոր ձեռքը տուողն, ինչպէս որ շատ դարերէ ի վեր կրսէին: Ահա ասկից ծագած էր այն հարիւրաւոր տարիներու վէճն՝ որն որ այս ժամանակներուս մէջ երթալով գնաց ու աստիպացաւ մինչև որ սուրն ու արիւնը վճառու իրաւարար միայն մնաց:

Աւերջագէտ, որովհետև գերբնականով դիտ մեղաւոր դատելով, իմ ձեզի գերի ըլլալս Սասունմէ եղանկ կուզէք հաստատել, ես ալ ձեզի քան ժը կը հարցնեմ ինծի պատասխան տուէք ըսաւ Բդալիա: Ինչո՞ւ համար է որ Սասունը հողագունդը մէկ արեգակն ալ մէկ՝ ստեղծած է ու չէ՛ թէ անոնցմէ երկերկու հատ կամ աւելի ըրած է:

Պատասխան տուին հակառակորդներն ու ըսին թէ՛ անոր համար է որ՝ ինչպէս որ ինք մէկ է անանկ ալ իր կամքը մարդոց նկատմամբ մի է ըլլալն ցուցնէ Սասունը, այսինքն ամէնքն ալ միևնոյն խնամքով կը խնամէ կամ այդ երկու մեծ բարիքները մարդոց հաւատարագէտ վայելելու տուած ըլլալը հաստատէ անոնց աչքին՝ և իր քովն աչառութիւն չ'կայ, ասոր համար է որ զինք՝ Սասունը արդար և անաչառ դատաւոր կը կոչենք:

Բդալիա. Մենք ալ կը խոստովանինք ասիկա և կը հաւատանք. անանկ է նէ, Սասունը արդար և անաչառ քեզի բարիք և երջանկութիւններ ևայլն, ինծի չարիք, գերութիւն ևայլն չըտար.....:

Հակառակորդներն. Իրաւունք ունիս ըսին. բայց դիտեա, որ Սասունը ազգի մը կամ ժողովրդեան մը մեղացն երբոր բարկանայ, անիկա պատժելու համար՝ ուրիշներուն կը մատնէ, անոնց սարուկ գերիներն ըլլալու:

Ի. Նախ՝ մեղքի համար Սասունը՝ մարդս ուրիշներուն գերիներն ըլլալու մատնելն չ'եմ ընդունիր. վասն զի, կարճ խօսքով մը, թէ որ մարդիկ իրենց գործած մեղքերուն համար՝ իբրև չար վարձք Սասունմէ տնօրինուելիք վարձատրութիւններն այս աշխարհիս մէջ ընդունէին, Քրիստոսի՝ իր առաքեալներովը հանդերձ Ուսնայի կալը գառաւտանի նստած ատենը, ներկայացնելու յանցաւորաց ցուցակ մը չի գտնուելով՝ գատելու կամ գառաւտան ընելու բան մը չ'էր մնար իրեն, որով՝ թէ՛ այդ Սասունը մտաւորապէս փառաւոր պաշտօնը յափշտակուած կըլլուէր, և թէ՛ դրախտն ու գոթիքը գառարկ կրնային մնալ, որն որ վեհ Սասունը մը մեծ անվայելչութիւն և մեծ վնաս մ'եղած կըլլար: Երկրորդ՝ քու բախտդ է ըսելդ ալ չ'եմ ընդունիր, հետեաբար իմ պարտքս է քաշելն ալ, երբոր անոր անանկ նշանակութիւն մը կուտաս, որ իբր թէ իմ երջանկութիւնս և ապերջանկութիւնս անոր ձեռքն ըլլային, որ անկարելի էր, որովհետև՝ եթէ ատանկ գործ մը տեղի

ունենար, Աստուած ամենակալի մը կը վայելէր, քան թէ հեթանոսական կուր բախտին :

Ասոր հակառակ՝ իմ բախտս է կընդունիմ, երբոր ասիկա՝ բախտն իմ ներկայ վիճակս ցըցնելու նշանակութիւն մ'ունենայ, ուր, կամ իմ տկարութիւնովս կամ անխելքութիւնովս, կամ ուրիշ ինծի նման էակի մ'իմ վրաս բռնութիւն բանեցնելով հայրենիքս ձեռքէս յափշտակելովը, կամ և որ ամենէն դառնագոյնն է, իմ Հայրենեացս ազատութեանը վրայօք անհոգ վատութեամբս սահած ինկած եմ. բայց իմ պարտքս է քաշելու եմն նորէն չ'եմ ընդունիր, քանզի՝ վեհ և ազնիւ բանական էակ մ'այս բաներն իրեն արժանի և վայելուչ չ'իսկուեր : Այս պատճառաւ, փոխանակ մեղքդ է ինծի ըսելուդ՝ քու այս գէշութիւններդ ու յանցանքդ է ըսելի՛ր՝ առանց պարտքդ է և քաշելու ես ըսելու, նորէն կընդունէի : Երբորդ՝ ատանկ թուր մը ձեր մէջքը կապողն և ան ալ պարտալ տեղը չըկապողն Աստուած է ըլլալը չընդունելուս համար՝ կը հարցնեմ ձեզի թէ ինչ կը նշանակէ այդ Աստուածային ըսած պատիժնիդ :

Հ. Գործուած յանցանաց մը կամ տրուած փնասու մը ժամանակաւոր փոխարինութիւնն է ըսենք՝ կըսէին. և քանի որ յանցաւորն այն նոյն պատժոյն մէջ է, անոր պարտաւոր է :

Ի. Իսկ մեր հայրերն այն միևնոյն պարժոյն մէջ մեռան, ուր ուրեմն պիտի վճարեն զայն :

Հ. Ատիկա լաւ մը չ'իգիտենք, սակայն, կամ յաւիտեան պարտաւոր կը մնան, կամ բնաւ չ'են վճարեր :

Ի. Ձեն մի վճարեր, յաւիտեան պարտաւոր . . . . . Աստուած արդար և անաչառ դատաւոր . . . . . թո՛ղ ասիկա մնայ հիմա : Հազար ութը հարիւր վաթսուն տարիէն առաջ՝ հռովմայեցոց իմ և ձեզմէ ոմանց հայրերուն իշխանութիւնը հրէաստանի վրայ վարող Սակաղոնացի Հէրովդէս մեծն՝ մարդուն ձեռքը՝ Դալիլիացի տուն տեղ չ'ունեցող աղքատ հիւսան մը Բեթղէհէմի մէջ եշերուն մսուրքն Իսրաէլացի նորածին մանկանը պատճառաւ, երկու տարուրնէ վար գանուող բոլոր տեղացի անմեղ մանկունքը ամէն սահմաններունովը ջարդող սուրը տուողն՝ Աստուած էր մի :

Հ. Ատիկա . . . . . :

Ի. Ատանկէ նէ, այդ արեանարբու երկաթը մարդոց մէջքը կապողն Աստուած չ'է, այլ մարդիկ իրենք հնարեցին զայն, որն որ երբեմն բուն կըրողն կը կարէ և երբեմն ուրիշներն, անհասոր համար ալ երկասայրի ըսուած է, և մարդոց արիւն թափելէ զատ՝ ուրիշ բանի համար հնարուած չ'է կամ չ'ի գործածուիր :

Բայց ես ձեզի հետ ներքին համոզմամբ կսեմ որ՝ Աստուած է այդ երկասայրի թուրը մարդոց մէջքը կապողն, սակայն, այս ալ կը յաւելում թէ՛ անոր մէկսայրին վրայ արդարութիւն և միւսին վրայ անիրաւութիւն գրուած է և որ իր հնարուելէն հետէ մարդիկ անոր անիրաւութեան սայրովն իրենց փառամոլութիւնները, չար ցանկութիւնները, չար կիրքերը և անյաղ ատելի ազահութիւնները յազեցնելու համար անմեղներուն արիւնը թափելէն չ'են զաղրիր : Իսկ միւս արդարութեան սայրովն ալ ինքզինքնին և իրենց հայրենիքը կը պաշտպանեն անողորմ բռնաւորներուն դէմ և ասիկա՝ անոնց անգութ և զիշատիչ ձեռքերէն ազտտելու համար անիկա գործ կ'ածեն : Այս խօսքերը գեռ խօսողաց բերնին մէջ էր, երբոր սուրին ծայրը քղանցքին տակէն ցուցնելով ըսին. թէ անհայտ երկասայրի սուրն այսօր

մեր գերիներուս մէջքն ալ կապեց Սատուած, մեր հայրենիքն ազատելով՝ մեր երկար ժամանակեայ անտանելի դերութեանցը և ողորմելի թշուառութեանցը վերջ մը տալու համար: Ուրեմն՝ Սատուածոյ արդարութիւնը մօտ է ըսելէն ետև՝ այս օրհնութիւնն ալ կարգացին կամ երգեցին: Օրհնեալ ըլլալ այն սուրն որ մեր ազատութեան գործիքը կըլլայ. Օրհնեալ ըլլայ Վարխալալտի որ մեր հայրենեայ ազատիչն եղաւ, և օրհնեալ ըլլայ այն երկիրն, ուր անիկա խանձարուր փաթթուեցաւ, օրհնեալ ըլլան այն ամէն հայրենասէր մարտիկներն՝ որ հայրենեայ ազատութիւնը սրտերնուն վրայ դրեցին, օրհնեալ ըլլայ այն ամէն բանական էակ՝ որ հաւախօտուն կ'ելլէ ու իր երեսը դէպ աղօթրան արևազալը դարձուցած՝ իր գերի հայրենեայը ազատութեանը վրայ կը խորհի, վասն զի, առանց ասոր հոգևոր և մարմնաւոր երջանկութիւն մը չըլլալէն ետքը՝ ո՛չ մտքի և ո՛չ ալ գործքի ազատութիւն չկայ. և այս երկրիս երեսը, բանականաց համար՝ մտաց դերութիւնէն մեծ մահացուցիչ հարուած և դառնագոյն չարիք ինչ կրնար ըլլալ: Մի թէ գործքերն այդ ակէն չեն մի բխդիր, վարուց և բարուց աղբիւրը հոն չէ մի, երջանկութիւնը անկէ չի հոսեր մի: Արդ՝ եթէ ակն ու աղբիւրը ատանկ, հապա վտակներն ինչպէս: Քերի ինկած ժողովրդեան մը վիճակը ելման դետոց յորձանքներուն ձեռքն իյնող մարդոյն վիճակն է. ինչպէս որ ասոր ուրիշ միջոց չ'կայ, կամ խորհելու կամ գործելու բայց եթէ ամէն հնարք ի գործ դնելով զինք ցամաքը փրկել. անանկ ալ անոր ուրիշ ազատութեան ճարմը չ'կայ, բայց եթէ ամէն ունեցածը զոհելով գերի ինկած հայրենիքն ազատելով, իր անձն անոր ազատութեան հողոյն վրայ տեսնալ:

Ժողովրդեան մը դերութեան զօրաւոր շղթայները քանի են: — Սատուած մեղի ասանկ ըրեր է, մեր մեղքն է, մեր բախտն է, մեր սլարտքն է, քաշելու ենք: Սուրը սլարապ տեղը մարդոց մէջք չ'է կապած Սատուած, և բռնաւորաց սրոյն անիրաւ կողմը՝ մեր արդար սլատիժն է, որով Սատուած մեղ խրատելու համար կուտայ անիկա՝ անոնց ձեռքը: Ամենէն զօրաւորագոյնն է, ատանկ ժողովրդեան մը ցանձ կամ ծառայական հաղած հողովն իւր հայրենիքը փնտռելով՝ անոր ազատութեանը համար հող չ'իտանիլն:

Ասոր հակառակն՝ Բզալիոյ ժողովրդեան տուածուրիկ է կամ այն աղնիւ ցեղին տրուած, այն զիւցաղնին սլահուած է, որն որ անյայտի մեծ ցնցումով մը թոթուեցիր վրայ ծանրացած դարաւոր դերութեան անողորմ լուծն, ինչպէս որ ցուլ գամէշը կը թոթուէ իրենը՝ որ իւր ուսը կը ճնշէր դառնասպէս, և կը կտորէ երկթէ սամիքն, որ իւր վիզն կը սխմէին քար հանգուրց կերպով կապուելով և կ'ազատէ անձն այն՝ քաշելու համար ուսէն կապուած չըտարուելու բեռէն: Ահա այս զօրեղ ցնցման արտաքոյ կարգի սասակութիւնն էր որ ինքնակալ մ'իր աթոռին վրայէն մինչև Վայէթին դժուարամատոյցը նետեց:

Թագաւորը Վայէթի ամբութեանց ապաստանեալ, զինական դիմադրութիւն մ'ընելէ դատ ուրիշ միջոց մը չ'ունի, վերջին ճիգ մ'ընելով, թէ իւր անձնական սպահովութեանը՝ և թէ վերատին իր աթոռը ձեռք բերելու մասին: Վասն զի, զօրաւոր է հարուածն և անբժշկելի որ շատ ձեռքերէ կ'ուզայ: Սյս մի և նոյն անբուժելի վիրօք վիրաւորեալ է նաև Հռովմայ սլապական տէրութիւնը, որուն գրեթէ նոյն օրինակ չ'կայ դեղ և դարման մ'որ կ'արեւնայ ողջնցնել իւր վերքն և զօրացնել իւր վատառողջութիւնն: Ո՛չ ասոր և ո՛չ ալ անոր՝ զէնքով

դիմադրութեամբ յաջողութիւն մը ձեռք բերելուն վրայօք քիչ հաւանականութիւն ունիմ :

Արքայական զօրաց բռնած դիրքը քաղաքական մասին չափաւորեալ և խելացի, և զինուորականին համար ալ՝ բնական ու յարմար է : Եսկ պապական զօրացը լաւ չէ, թէ և հարկը կը պահանջէր ալ նէ . քանի որ Սարտենիա Միջերկրական և Ադրիական երկու ծովերէն ցամաքը զօրք թափելով՝ պապական երկիրներուն վրայ յարձակելու և ծովեզերեայքը ձեռնելու սպառնալիք կընէ, և Պապին իր հողերէ և մարմնաւորէ խառն իշխանութեան ներքե կողմ ժողովուրդն իրմէ զլուծի կը քաշէ, և զինք ատելով չուզեր՝ որ ամենէն զէշն է իրեն համար : Ասան որոյ, ըստ իս վնաս՝ քան թէ օգուտ, ձախորդութիւն՝ քան թէ յաջողութիւն կրնայ յուսացուիլ պապական զօրաց բռնած այժմեան կացութենէն . և ասիկա անոր ունեցած զօրութեանը համեմատ՝ կըսեմ : Թէպէտ և Տըլամօրիսիէր անուանի զօրապետ մ'է, որ երբեմն Ալճէրիի Քաղղիական զօրաց երևելի հրամանատարն և զուաւ ըսուած զօրքերը հնարողն ինք եղաւ, և հիմա ալ ծովեզերեայ Անքօն քաղաքն իւր բարձր հանճարովս ամէն կերպով ամրացուցած և անոր սրաշտպանութեանը համար՝ ութ հազար զօրաց բաժին մըն ալ հոն դրած ըլլայ, և միանգամ կամ երկու ձեռքն եղած անհամեմատ զօրքովը Սարտենիոյ զօրաց դէմ ճակատամարտ տալու կարողութիւն ունենայ, սակայն ամենէն վերջ, շատ տեղեր ժողովրդեան ապստամբութիւնը զսպելու և շատ տեղերէ ալ դիմադրութիւններ ընելու համար զօրքը ցրուած ըլլալով, զգացած տկարութիւնովը կամ ի փախուստ կամ վերջին յուսահատական ճիգ մ'ընելէ ետև՝ անձնատուր ըլլալու կամ Անքօնի ապստամբելու կը սարսուռուէր, որ անատեն ծովին կողմէն զինք ձեռող զօրաւոր նաւատարմիդ մը կ'ունենար և ցամաքէն ալ յիսուն հազար սարտենիացի կանոնաւոր զօրաց երկու բանակներէն սրաշարուելով, թէ ուշ և թէ կանուխ անձնատուր ըլլալու դաշինք մը կրնար կնքել Սարտենիոյ հետ : Յայնժամ հեռուանքը կըլլար ասիկա, որ Պապը կը կորսնցընէր իւր զինուորական զօրութիւնը, կորսնցնելով միանգամայն Օմպրի, Մարշի, Սիօլէթի, Վիթերայի և այլն երկիրներն, կը կորսընցընէր նաև Ռօմանիայիներն, որ ըսել էր թէ՛ իր ձեռքը պիտի մնար ունեցած երկիրներուն երեք մասէն փոքրագոյնը : Բայց եթէ այդ առջի յատակագիծը դործ չիդրած՝ Պապը թէ և նոյն յարձակմանց ենթակայ ըլլար, ետքի կորստեանը զիջանէր, առաջինը կը շահէր, այսինքն զօրքն ու պատերազմական պաշարը ձեռքը կը մնար . և անատեն Տըլամօրիսիէր դէպ չուովմ ամփոփուելով՝ թաղաւորական զօրաց հետ կրնար միանալ, որով եթէ վաթսունէն եօթանասուն հազար զօրաց բանակ մը կազմուէր, չեմ ըսեր թէ Հայրենասիրաց քաշած արդար սրոյն բերանը կրնային բթացնել Պապն ու Թաղաւորը, սակայն զանոնք վերատին նուաճելնուն մեծ հաւականութիւն ունիմ : Սարտենիոյ դէմ ալ բռնելիք դիրքերուն համեմատ՝ թէ Պապին և թէ Թաղաւորին ձեռքը մնացած կտոր մ'երկիրներն առժամանակ մը պահելու կարող ըլլալով՝ իրենց այդ ստանեալ իշխանութեան կործանումն կամ անկումնը՝ կշիռքին մէկ աչքն և վերահաստատուիլն ալ միւսը կրնար դրուիլ : Բայց եթէ այս միջոց ժամանակին անդադար յառաջ մղէր իր յարձակումները Սարտենիա, Միջերկրական ծովէն և այն կողմի ցամաքներէն և Ադրիականի կողմէն ցամաքէն միայն, և Աարիպալտի ալ Նափօլի կողմի ցամաքէն, ան ատեն միացեալ բանակն երեք զլիսաւոր կրակներու մէջ սրաշարուե-

լով, դուրսէն ալ ուրիշ օգնութիւն մը չունենալով, իրեն անյաջողութիւնէն հետեւելի ճակարդութիւնը՝ այս երկու իշխանութեանց կործանման վերջին կենիքն կրնար ըլլալ: Ան ատեն Նախօրի վեհափառ թագաւորը Պուրսոնեան՝ կը կորսնցնէր գոյութիւնը եօթը հարիւր երեսուն ու հինգ տարուան ելլող և իր նախնեացմէն հարիւր քսան ու չորս տարիներէ հետէ ժառանգուած և իրեն ժառանգ թողուած թագ մը, որ իւր սրտին անհնարին ցաւ մը և խղճի խայթոց մը, և իդալական ազգին համար ալ՝ ամենամեծ ատելութեան և արհամարհանաց անմոռանալի յիշատակ մը սլօտի ըլլար յաւիտեան:

Այս թագաւորութիւնը 1133 թուականին հիմնողն եղաւ Ռօճէր անուն մարդ մ'որ՝ Սարաղէներն Բղալխայէն և Սիկիլիայէն վանտող Նորմանաացւոց զխաւորն էր. և այս թագաւորութիւնը զանաւրան կայսերաց և թագաւորաց ձեռք ինկաւ մինչև ցայսօր: Երբեմն Գերմանիոյ կայսերաց, երբեմն Սպանիոյ թագաւորաց, երբեմն Անճուի տանն և երբեմն Սրակիոյ և Փաղղիոյ թագաւորաց, Իւթէրքի դաշնագրութեանն ալ Աւստրիացւոց տրուեցաւ. և վերջապէս, 1736, Փաղղիոյ պուրպոնեան տանն յանձնուեցաւ, որ այդ աշխարհին վրայ հնուց իշխող թագաւորական ցեղերուն օրինաւոր սեպուած մէկ ճիւղն է:

Ալ ահա հիմա եկաւ ժամանակն ըսելու թէ՛ մարդս ինչ որ կը ցանէ, այն կը քաղէ, կամ ինչ որ կընէ, այն կը դտնայ կամ ըրածը դէմը կ'ելլէ: Այնպիսի յայտնի ճշմարտութիւն մ'է ասիկա, որուն գոյութիւնն աշխարհիս հիմերն դրուած ատենէն սկսուած է և որուն վրայօք հոս ցուցմունքներ ընելու ստիպողական հարկ մը չ'եմ գղար: Աը մնայ դտնալու կամ քաղելու եղանակին միայն ուշադրութիւնս դարձնել և այն ալ երբին միայն: Յայտնի է թէ ցանելուն ու քաղելուն կամ գործածին փոխարէնն ընդունելու մէջ տեղն ապառնի և անորոշ ժամանակ մը կայ, որուն ուշ թէ կանուխ գալը գործողին և այն գործողութեան ենթակայ եղողին զօրաւոր և անզօր սպարազայներէն կախուած է: Գարձեալ յայտնի է թէ՛ հայրերուն ցանածն, որդոց սքաւաքն է ժողովել, ասանկով որդոց որդի անցնելով այս սքաւաքն, ամբողջ դարեր կրնան հասիլ, այնպէս որ՝ հարիւրաւոր դարերէ բազկացեալ շղթայ մը կը գոյանայ առջի ցանողին և վերջի հնձողին մէջ տեղն, որ է ճշմարիտ: Այլ արդ՝ ըստ որում, մարդս բանական, զգայուն և յիշողութեան տէր էակ մ'է, երբ որ անիրաւ բռնաւորէ մ'որ և իցէ չարիք մ'ընդունի, իր կեանքին դէմ, կամ փնաս մ'իւր արդար բարեացը դէմ կամ միանգամայն ըսեմ, իր հայրենեացը դէմ յափշտակութիւն մը և բռնութիւն մը, սիրաւ կը վիրաւորի, և սրտի սաստիկ մեծ ցաւ կըզայ իր ներսի դին, քաշել չուզեր այս գառնութիւնը. ուստի, այն նոյն ատեն կը ցանկայ որ եղած թէ բարոյական և թէ նիւթական փնասուն փոխարէնը հատուցուի կամ սրտիժը քաշել արուի այն բռնաւորին. և որովհետև, ինք շատ անգամ տկար ըլլալով՝ իր ձայնը լսելի չըլլար իր հարստահարողին, և իր վրայ բռնացողին քարացեալ սրտին՝ իր անզօր աղաղակները չեն ազդեր, մանաւանդ թէ ևս առաւել կը սաստկացնեն անոր անդթութիւններն և կ'արծարծեն նաև իրեն սրտի ցաւոց կայծերն, որչափ որ ալ որ իրաւացի ըլլան իր ըրած ամէն բողոքումները, քանզի՛ ո՛վ որ զօրաւոր է, հիմա և միշտ իրաւունքն անոր ձեռքն է. ասպաքէն, փոքրիկ արտունջ մ'անգամ մեծ թշնամանք է անանկներուն առաջին, և իրաւունք փնտուել մ'անհնարին յանցանք. ասոր համար, ան ստեն գոհ կըլլայ այդ թշուառ և կենդանւոյն

մեռեալ էակը միայն իւր սրտին մէջ պահել, և իւր այդ չխմարուող բոցերը քիչ մը մեղմացնելով մոխրի տակ թաղելու համար՝ իր որդոցն ցաւակցելով պատմել և կրտակաւ պատուիրել: Այնպիսի վառուած խանձող մ'է իւր մոխիր դարձեալ սրտին խորշերուն մէջ այդ կսկծեցուցիչ մահացու ցաւն, որուն վրայ եթէ ջուր լեցնես, անվերջանալի գոլորշիք կը հանէ սիրտ ծակող մաղկտանքով, և եթէ թող տաս, կը վառի, կը բորբոքի և կը միայ: Վերջապէս, ինք կը մեռնի կ'երթայ, սակայն այդ երող մրկող կայծը չխմարիր իւր որդոցն և իւր սերնդոց սրտին մէջ, դարեր կ'անցնին վրան, ու չիմուցուիր, ամէնէն վերջը, օր կուգայ որ իւր սերնդոցմէն կարող կըլլան այն ընողին գտնալ տալ կամ ոտքին փաթթել և կ'ամ ըրածը դեմը հանել:

Ահա այս կերպով, անվրէպ հատուցումն կըլլայ օր մ'այն ամէն անդուլթ, անիրաւ և բռնաւոր իշխանութեանց և անոնց որդոցը և սերնդոցն, որոնք դարերէ հետէ տկարին ձայնն արեան մէջ խղղելով, կ'արհամարհեն անզգամներու պէս կը հարստահարեն կը զրկեն անիրաւներու պէս, և այլն և այլն գործելով անոր Հայրենեացը վրայ բռնանալով, անիկա իրենց արծաթագին գերին կընեն՝ և այդ հատուցումն է այն տկարին համար լարուած լարն, որն որ իրենց ոտքին փաթթուեցաւ, այն փորուած խորունկ փոսը և խորխորատն, ուր իրենք ինկան: Մէկը չկայ որ այն կրուած չարիքներուն չըվկայէ և տակաւին կրուելիքները՝ չըգուշակէ, բայց եթէ հայրենատեաց անզգայ, անփոյթ և սնտոտափառ երկու աչքով կոյր մը, վասն զի, օտար բռնաւորին ազ ու հացովը կուրցուած աչք մ'անոր թուրը քաշելու չէր մի: Անատեն թող դոնէ գերեզմանները՝ վկայեն այս գործուած աշխարհածանօթ չարիքներուն, որոնցմէն ոմանք՝ հացերնին ճրի ուտողաց՝ ուտելուն վարձք մ'ալ վճարելու պատրաւորեալ և վճարելու անկարող ըլլալնուն համար՝ մորթուեցան, և միւսներն՝ արդար ստացուածքնին զրաւուելով կորսնցընելէն ետև՝ անոր փոխադրութեան զինն անգամ տալն իրենց պարտքը սեպուած ըլլալուն և չկարենալ վճարելնուն համար՝ զըլխատուեցան, և այլն և այլն. պատճառն սն է որ՝ անիրաւութիւնը գործողին ձեռքին մէջ արդարութիւն սեպուած, և այն ընկճեալ տկարին հարստութիւն ունենալն ալ այդ բռնաւորին աչքին մեծյանցանք համարուած է: Եթէ այսչափս չկարենայ թերեհաւատին ուղեղը ծակել՝ եղածին հաւտալու, միթէ պատմիչն կը մեռնի: Հաղարաւանդ ազգի մ'որ իր մէջ անցած անցից օրականը նշանակելով զրի առնելը զանց կ'առնէ և օտարին հին առասպելներովն իր զլուխը կը լեցնէ կ'ամ անոր փառաւոր պատմութիւնները կարգալ կը սիրէ: Վահ ազգի մ'ու ժողովուրդեան մ'որ՝ փոխանակ Հայրենեաց ամայի ու խորունկ լալոյ ձորերը քաշուելով անկէ անոր հազարաւոր տարուան մեծ աւերմանն երկինք բարձրացեալ փոշին և բարդ բարդ բարձրացող երերող ծխոց դիզանը վիզը ծռած դիտելով՝ իր ազի արտասուած հեղեղներովն ասոր խորութիւնը լեցնելոյ, դացած իրր առած մահառիթ հարուածին անզգայ և ենթակայ եղած մեծ թշուառութեանցը տգէտ, օտարին հարսնէտունը անհող բազմած կը զուարճանայ: Նոչ որ ըլլայ, օտարինն է, քուկդ չըկրնար ըլլալ: Վիրաւորեալ դէմքդ տեսնալու համար ուր կընայիս, ջուրը, զքեզ ճանչնալու ու վիճակդ դիտնալու համար ալ քու մէջ անցած անցքերն աչքիդ առջին բեր միշտ, քու սերնդիդ սրտին մէջ վառ և բորբոք պահէ զանոնք ներկային զգաստ, սպառնիին ալ խեհեմ ըլլալու համար: Ահա քու փորձառու մեծ վարժապետդ, որն որ եղաւ Եղալիոյ ալ:

Իսկ, ես դառնամ ըսելու թէ, Հռովմայ ներկայ Պապը պիտի կորսնցընէ այնպիսի երկիրներ կամ հարուստ ստացուածներ, զորոնք, զանազան դարերու և ժամանակներու մէջ Պապերը՝ զանազան թագաւորներէ և թագուհիներէ, դըքսերէ և դքսուհիներէ և բարեպաշտ գերդաստաններէ կամ իբրև պարզ և ընդունեցին կամ գնեցին և եկեղեցւոյ ժառանգներն ըլլալու համար վաւերացուցին:

384 թուին՝ Հռովմայ եպիսկոպոսը՝ Սեղբեստրոսյապութեան անուն կ'առնէ: Այդ թուականէն սկսեալ մինչև 733, Հռովմայ Պապերը քաղաքական գործոց մէջ չ'էին խառնուեր. ասիէ սկսելով իրենց երկիրները հետզհետէ մեծցնելու ետէ ըլլալով, բերին մինչև այժմեան տարածութեանը հասուցին:

Ստեփաննոս Բ պապ, կընդունէ Պեպինոսէն Էքսառչա Ռավենի ու Հռովմը կամ ժառանգութիւն սրբոյն Պետրոսի գաւառներն, 753:

Անդրիանոս Ա՛ Կարոլոսի ձեռքովն այդ պարզեր կը վաւերացնէ, 800:

Լևոն Թ՛ Գերմանիոյ Հանրի Գէն կընդունի Պէնէվէնթի դքսութիւնը, 1033, զոր թէ և ետքէն Նափօլիի թագաւորը կ'առնէ, 1788:

Գրիգոր Է՛ կ'ստանայ Թօսքանայի Մաթիլտ դքսուհիէն Վիթերուա, Օւվիէթա, Սիօլեթի դքսութիւնը և Անքօնի Մարշը, 1077:

Գրիգոր Ժ՛ կը յաւելու իւր երկիրներուն վրայ Քօմդադ Վենեսէն և Ավենիօն՝ 1273 որ (ետքը Գաղղիացւոց կը ձգուի, 1791):

Յուլիոս Բ՛ կը տիրէ Ռօմայնի և հայրենական ժառանգութիւն ըսուած գաւառներուն, 1312:

Ուրբանոս Ը՛ նորէն Սիօլեթի դքսութիւնը կ'առնէ և անոր վրան կը յաւելու Իւրպան երկիրը, 1631:

Սղէքսանդր Է՛ կ'ստանայ Քասդրօ և Ռօնչիկըլիօնայի դքսութիւնը:

Արդ՝ անոնք՝ որ այս ձեռնարկութեամբ հասարակօրէն ցուցնել կ'ուզեն թէ Պապերը հոգևոր ըլլալով, իրենց երկիր պէտք չ'է, հետևարար ժամանակաւոր իշխանութիւն ալ պէտք չ'է իրենց. ուստի, իրենց երկիրները թո՛ղ տալու են այլոց ըսելու ալ կը համարձակին, ինչպէս որ Սարտենիոյ տէրութեանը թող տրուելնուն տարակոյս չկայ, չարաչար կը սխալին իրենց դատմանցը մէջ:

Իրանցնէ, Պապերուն երկիրպէտք չէ, հոգևոր ըլլալնուն պատճառաւ, սակայն երբոր իրենց ճակտին քրտինքովը վատակած են զանոնք, մարդ իրաւունք չ'ունի իրենց մէջ բռնի յափշտակել, որ է ըսել զինու զօրութեամբ առնել: Թէ որ յափշտակել ուզողն ինք անգամ տուած ըլլար, նորէն միայն համոզել և ո՛չ թէ զէնքով սպառնալ պէտք էր առիւծի պէս իրմէ տկարի մը վրայ, որ ինք զինք պաշտպանելու համար՝ և ո՛չ կար կարողութիւն մ'ունի: Բայց յայտնի է թէ ո՛չ բռնի յափշտակել սուղին իրեն տուրքն է, և ո՛չ ալ գողցուած ստացուածքներ են, այլ թէ, ինչպէս վերերըն ըսած եմ, այլ և այլ թագաւորաց կայն բարեպաշտ գերդաստաններէ պարգևած կամ Պապերուն ձեռքովն անոնցմէ գնուածներ են: Գարձեալ, թէ որ Պապերն այդ երկիրները ժամանակաւ մուրալով դուրալով բուռ ճարած չըլլային, ո՛վ զիտէ թէ այժմուս ո՛ր ազգին ձեռքը կը մնային. և կամ թէ Իդալիա անունն ալ հիմա կընին մի պիտի արդեօք:

Նւ ահա՛ այսպիսի անիրաւ յափշտակութեան և զրկողութեան մը՝ մէկուն ցանածը, մէկ ուրիշը քաղել, և անիրաւ կորստեանն ալ՝ հատ հատ ժողովել, զոգով ցրուել կամ կորսնցնել կըսուի: Ահա՛ այս պատճառաւ, արժէք մը չ'են ունենար ան-

ատեն այն մեղադրանքներն ալ թէ, Պապերն ամպիոնէն Սահարանի երկնաւոր  
և փրկարար ճայնորը հնչեցնելուն տեղ՝ հողերէ շինուած մարտկոցներուն կայն  
ամբութեանց վրայէն թնթանողներուն երկրաւոր ճայները կը դուայնեն : Ար-  
դեօք ըսել չէր մի ըլլար յայնժամ, թէ քու տունդ թշնամիներէ պաշարուելով և  
քու անձդ ալ վտանդի մէջ դրուած ատենն ալ, ձեռքդ մի վերցներ անոնց դէմ  
քեզ ու քու ինչքդ պաշտպանելու համար. վասն զի, երկրիդ օրէնքն որ և իցէ  
մէկում մը դէմ ձեռք վերցնելը կ'արգիլէ : Պապերը միայն հողեր կոչելով, մի  
թէ հետեցնել կ'ուզեն թէ մնացածներն անհողի են : Աւրեմն ինչպէս որ մարմնա-  
ւորներն, անանկ ալ հողեր կոչուածները միօրինակ իրենց անձը և ստացուածքը  
պաշտպանելու իրաւունքն ունին. ուստի, Պապերուն անհրաժեշտ պարտքն է մին-  
չև վերջն, այդ՝ յափշտակուելու ենթակայ երկիրներն պաշտպանել անոնց կրե-  
լիք յափշտակութեանը դէմ. վասն զի, ստունք իրենց նախորդներէն իրենց՝ և  
իրենցմէ ալ իւրեանց յաջորդացը մնացած ժառանգներ են :

Այլ աւանդ, ոչ սակաւ ձեռնտու եղան այս անշարժ ստացուածները թէ բուն իսկ  
վաստկողաց և թէ իրենց յաջորդ Պապերուն երկրաւոր փառամոլութեան կիրքերը  
զրգուելու, զորոնք այն աստիճան պարարեցին շողոքորթներն որ՝ այս կրօնաւոր-  
ներն ոտքերնին տրեխ և վրանին սև հազած, մէջքերնին կաշի և կռնակնին հաց  
մըն ալ չըկապած, աշխարհիս կռնակ ըրած, ձեռքերնին արօրին մաճին վրայ  
դնելով՝ երենք՝ երենք կանչող և իրենց հետեող ժողովուրդն երկնաւոր և յաւի-  
տենական կենաց մը հրաւիրելով առաջնորդելու համար՝ անդառնալի ուխտ  
ըրած ատեննին ալ, իրենց այս փառաւոր ընթացքէն մօլորելով՝ երեսնին նորէն  
դէպ երկրաւոր և անցաւոր աշխարհս դարձնելով՝ անոր նայեցին, և անոր խաղիչ  
ունայն փառքերովը շլանալով՝ թագաւորաց թագը դուխնին դրին, զաւազանը  
ձեռքերնին առին, վերարկուն վրանին ձգին և անոնց երկրաւոր գահօյքները  
նստել ուզեցին և նստան և կը նստին մինչև ցայսօր, հակառակ այն՝ հետևած  
կրօնքնուն հեղինակին, որուն թագաւորութիւնը այս աշխարհէս չէ (2) :

Մտքերուն մէջէն հանեցին մանաւանդ թէ ծուռ մեկնեցին և հասկցուցին իրենց  
ժողովրդեանը և բոլոր աշխարհի ալ, թէ՛ այն շիթ մ'օծութեան իւզն որ դուխ-  
նուն թափուեցաւ, այն ձեռքերն որ վրանին գրուեցան, զիրենք փրկուած՝ Սա-  
տուծոյ թագաւորութեանն արժանի եղած ըլլալ, և հետևաբար ալ նոյն ժողովրդ-  
դէսն և տիեզերաց ալ միմիայն հողեր տէրը և բացարձակ իշխաններն ըլլալու  
երազներովը խարուիլ, և թէ ըստ քմաց՝ այն ժողովրդեան կամ թէ այն անհա-  
տին՝ դու՛ այն կողմն Սատուծոյ՝ և մեր հրամայելովն արքայութիւնը մտիր, և  
այս անհատը կամ այս երկրիս ժողովուրդը, դո՛ւ ալ, այս դին Սաղայէլին ծծմբով  
վառուած հրեղէն լիճն իջիր և անոր այրող բոցերուն մատնուէ՛ կը նշանակէր,  
ոչ ոչ. այլ, իրենց բնակած երկրին և իրենց հետ ապրող և ան ալ զիրենք ընդու-  
նող ժողովրդեան միայն կամ եկեղեցւոյն օրտին ժամանակեայ և կամաւոր հա-  
ճութեան խորհրդական նշաններն են, որ զիրենք անոնցմէ այդ վարած և ընդու-  
նած պաշտօնուն կանչուած ըլլալը միայն կը ցուցնեն. և այս ժողովուրդը կամ  
եկեղեցին կարող է և ամէն ատեն ազատ՝ իր տուածն և տ առնելու, երբոր  
ուղէր կամ իրեն հարկ ըլլար :

Այլ ոչ, այդ կամաւոր տուրքը և ժամանակաւոր հաճութիւնը թէ ասուողին և թէ  
ամենայն աշխարհի ալ՝ արեւարոյժ, մարդախողող բռնաւոր մը և անգութ գա-



հիմն մ'եղաւ : Հեռի բլրայ : Յայց սակայն իբրև թէ այսպիսի բռնաւորութեան մը ձեռքն եղած և ուրիշին համար խաղցուած երկասյրի սուր մը բռնողին դառնար և անոր անկանդանի սղորմութեան արժանի անկումն ու կործանումն արագէր . դարձեալ իբրև թէ գերանդին ուսին անգութ մահ մ'անոր սոկէդրանը շէ մին քով անոր դառնագոյն օրհասականը փութացնելու սպասէր : Աւերջապէս և միանգամ, հայրենասէր անհատ մ'անգամ չարորքեան արդի մը, հարստահարուած, անարդուած և մտիկ չ'եղուած ատենն, կարող և պատրաստ կրնար բլլալ, իւր արեան գնովը իր արդար վրէժը քակելով՝ և՛ զինք և՛ իւր ատրուկ գերի ինկած հայրենիքը մեծ և անողորմ բռնաւորութեանց ձեռքէն աղատելու համար : Եւ անո՞ւ այս ատեակ անհատներուն մէկտեղ դալովն է որ կը կազմուի աղդ մը և ասոր միութեան զօրութեամբն է որ փրկուի Հայրենիք մ'որ է այսօր իգալացին և Եղալիա :

Ար ցանկան, հագի Հայրենասէր, կ'աղաղակէր փորձառութեան խոհեմազարդ ձերունին Եղալիա, Հայրենիք մ'ունենալ, անգ մ'ունեցիր . անգ մ'ունենալ՝ դայն բաղկացնող անհատները սիրով խնամէ և դարձեալ խնամէ, և Հայրենեաց աղատութեանը համար կեանքը դնող ուխտադիր նահատակին ձեռք երկնցուր, քաջալերէ և զօրացնուր անիկա, մանաւանդ թէ կատարեալ համարմունք ունեցիր անոր վրան, դիտես որ սուրբը զօրաւոր ընողը տէրն է . և թէ դարերը շուտով կուգան, իսկ դիւցազն մը հաղիւ հազար կամ հինգ հարիւր տարին անգամ մ'երևան կ'ելլէ : Սյլ և փութա՞ ցրուածները խնամով ժողովելու և կտրուած ներն ալ մեծ աչալը ջութեամբ և մեծ ջանքով փնտուելու ետևէ եղիր : Եթէ այդ սրբազան պարտքը զանցառու ախտամոլութիւններ գտնուին, որ միայն սնափառութիւններու և չար ցանկութիւններու ծառայեն, մէկ կողմէն աշխարհս և իր փառքն ունայն է զօղանջէն, քանի որ միւս կողմանէ հազար ու մէկ խորամանկ խարէութեամբ ժողովրդեան մէջ բարձր ու փառաւոր աթոռներ դնեն, և իրենց յատկացած տրգիտութիւնն և անզգամութիւնն ալ ծայրը հասցնելու համար՝ մեկէն ի՛նչ կելլէ՞ ըսեն, մօրուաց մագ մը կորստուցաւ, այդ պիտի արեանարբու դիշատիչ դաղանութեան մը՝ որ միայն կրից և հեշտութեանց ծառայելով՝ անգթարար բանական ազգի մը գոյութիւնն աշխարհիս երեսէն ջնջել կը մտարերէ, երեսուն միլիոնը հինգի, հինգն ալ մէկի, և մէկն ալ, որ կորսուածք մազն էր, ոչընչի իջեցնելով՝ վնասակար կեանքը բառնալու փութա՞, առանց միտ դնելու կարգի և հասակի և աստիճանի :

Ստոյգ ուրեմն, ո՛չ աշխարհս և ո՛չ ալ իր փառքն ունայն (Յ) չ'են, այլ ունայն՝ այն ունայնասէր զրարաններն են որ իրենց կռկուանքովն աշխարհս գորտերու ժամտուն դարձնելով՝ ականջ չիթողուցին որ չիճանճրացունեն և սիրտ չիթողուցին որ չիպաղեցընեն իր բարիքն այսինքն հայրենիքը փնտուելու և աղատելու մասին հոգ տանելու :

Ս.հա՞ ասանկ ու ատոնց պէս ամէն ճշմարտութիւնները ճանչնալով պարարեցուց իր սիրտն Եղալիա՝ և այս ամէնուն գործադրական արդիւնքովն էր որ, կազմուեցաւ միութիւնն՝ որ էր այն զօրութիւնն, որ փրկեց դժբախտ ու գերեալ Հայրենիքը :

Ուրեմն թո՛ղ ըսէ Եղալիա . հնչէ՞ հրիշտակդ աղատութեան, հնչէ՞ քու միութեան աւետաւոր հոգեկեցոյց փողդ Քիւրնէլի բարձրութեան դադաթէն, ո՞ տարարնակ օտարացեալ զարմ և զաւակ Եղալիոյ, ձեր Հայրենի տունը դարձէ՞ք, ձեր զորովա՞

դուժ մօրը գիրկը ինկէք, և գիտցէք ներքին համոզմամբ, որ ձեր խռովեալ նաւուն ազատութեանը համար խարխախ ձգելու ուրիշ ասպահով նաւահանգիստ մը չ'ըկայ, բայց եթէ այդ հասարակաց մօրը Հայրենեաց ծոցին մէջ. և դժբ' արդէն անոր մայրական սիրոյն և զթութեանը արժանացածներդ, սիրով գրկելով համբուրեցէք ձեր գտնուած եղբարքը. և ասանկով ամէնդ միաբան մէկդի հանեցէք վրանուդ այն բազմամեայ սգոյ տխուր հանդերձները ու միութեան ազատութեան տասն և կամ հինգ դարաւոր տօնի տասն և հինգ երրորդ նշանաւոր Գարազլիսուն ծիրանին երովը հազուեցէք: Այլ և թո՛ղ հոս կայնի մնայ օտար հնձնահարին ոտքը՝ թո՛ղ մէյ մնալ աւազուտը չիկանգնի այն օտար վրանը, և չիղրուի անոր մէջի սեղանը: Այլ՝ դուք սիրեցեալ որդիք Եղալիոյ, թէպէտև հարստահարեալ, անկէ և անոր բարիքները վայելելէն զրկեալ, սակայն անոր ճշմարիտ ժառանգները, ծնանդր, փութացէք ջուրովեցէք այդ հասարակաց մօրն հայրենեաց անմահ և սուրբ սեղանին բոլորտիքը, ուր՝ ամենքդ միատեղ անկէ առէք ու կերէք և անոր գինիէն անոր կենդանութեանն ըմպեցէք անոր ժայռերու վրայ հիմնեալ տանը հաստատուն և սուրբ ծածքին տակ՝ որ յաւիտեան երջանիկ սպրիք:

Եւ ահա՛ յայնժամ է որ՝ Աստուած երկնքէն հաշտած աչքով նայեցաւ ու հաճեցաւ, և մարդ երկրէս դարմացաւ և ըսաւ. միթէ հարիւրաւոր տարուան դոսացեալ չորցած կմախքն ալ յարութիւն կ'առնեն:

Փարիզ, 8 Սեպտեմբեր 1860:



ՀԻՄՆՈՒՄ ԿՈՒՅՑ

10  
11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32



Արարիկ  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի  
Երկրի



## Վ Ր Ի Պ Ա Կ Ք

| ՍԻՍԱԼՆԵՐ         | ՈՒՂԻՂ            | Էջ | Տող |
|------------------|------------------|----|-----|
| Ուր              | ուր              | 6  | 17  |
| Կենդանութիւնը    | Կենդանութիւն     | 7  | 57  |
| Հռոմային         | Հռոմոցիին        | 9  | 5   |
| դալարափոխով      | դալարափողով      | 9  | 55  |
| Թշուարութիւն     | Թշուարութիւնը    | 9  | 41  |
| վատահացուցուեր   | վատահացուեր      | 12 | 5   |
| մրկեալ           | մրրկեալ          | 12 | 8   |
| կարծէր           | կարծեր           | 12 | 9   |
| հարիւրահազարաւոր | հարիւր հազարաւոր | 12 | 11  |
| էր               | է                | 15 | 14  |
| կազմել           | կազմել           | 15 | 29  |
| եչողի            | եղողի            | 15 | 1   |
| արդնցողի         | արթնցողի         | 15 | 2   |
| անունթներն       | անունդներն       | 16 | 19  |
| լուայն           | լուսոյն          | 16 | 54  |



## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

(1) Միանգամայն ծանազուիլն հերիք ըլլայ, թէ Սարտենիոյ երկրին տարածութիւնը և բնակչաց թիւն հոս առնուած չէ :

(2) Ասանկ թագաւորութեան մ'այս աշխարհէս ինչ մտօք չըլլալուն վրայօք, ժամանակիս ներելովը պերճաբար խօսելու ղիտաւորութիւն կայ :

(3) Աշխարհս և իր փառքն ունայն ըլլալուն և չըլլալուն վրայօք, նոյնպէս պերճօրէն ճառելու միտք ունիմ :

—  
Ժամանակիս ներելովը, և աշխարհիս ալ պարագայիցը համեմատ՝ Հայոց տանը վրայօք քանի մը ղիտողութիւններ ընելու միտք ու քաղճանք ունիմ :



ALLEGORIE

(1) Die Gerechtigkeit ist die Herrin über die Welt, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet.

(2) Die Gerechtigkeit ist die Herrin über die Welt, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet.

(3) Die Gerechtigkeit ist die Herrin über die Welt, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet. Sie ist die Königin der Gerechtigkeit, die alle Menschen nach dem Verdienste richtet.









813

2013

